Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանել է 2026 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրերը: Այսպիսով՝ 2026 թվականի ՏԻՄ ընտրությունների քվեարկության օրեր են սահմանվել սեպտեմբերի 27-ը, հոկտեմբերի 25-ը, նոյեմբերի 29-ը:

Հինգշաբթի
20 նոյեմբերի 2025թ.
№ 18 (648)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Բայց ուղին մեր եղել է
մի՛շտ մթին,
Եղել է անանստգյուտ ու
անփառունակ,
Տարածվել է անբոց ու անժպիտ՝
Ուրիշների փայլով շարունակ
Շառագունված–որքան, որքան
աղետավոր...

Եղիշե Չարենց

Ի՞նչ է կատարվում Սյունիքում. անհետանալու շեմին է 47 հանրակրթական դպրոց

Եթե մենք չունենանք կայացած կրթական համակարգ, վաղը լավ երկիր էլ չենք ունենալու: Սա աքսիոմատիկ ճշմարտություն է, որի դեմ հնարավոր չէ հակառակվել, փաստարկներ ներկայացնել: Իսկ վերին մակարդակներում արվում են քայլեր, որոնք բնավ էլ միտված չեն նորմալ կրթական համակարգ ունենալուն, եթե չասենք հակառակ են դրան: Չորրորդ անգամ, դեռևս 2023 թ. սեպտեմբերի 11-ից հրապարակի վրա է «ՀՀ կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրում ներառված պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանկը հաստատելու մասին» № 1790 Ա-/2 որոշումը, որի համաձայն Սյունիքի մարզում նախատեսվում է օպտիմալացնել 47 դպրոց, ըստ Սյունիքի խոշորացված համայնք-

Շարունակությունը՝ էջ 3

Մեղրիում կատարվելիք «արտահերթ» սահմանազատման հանելուկը. 32, թե՞ 44 կմ է Արաքսի առափնյա մեր ինքնիշխան տարածքի երկարությունը



Կառավարության պատասխանատուներն օրեր առաջ տեղեկացրին, որ Հայաստանի ու Ադրբեջանի սահմանների ճշգրտման աշխատանքները (Տավուշից հետո) կիրականացվի Սյունիքում:

Պատճառաբանվում է, թե «արտահերթ» սահմանազատումը կատարվում է, որպեսզի TRIPP–ի ենթակառուցվածքային զարգացմանը նպաստ բերենք:

«Արտահերթ» սահմանազատման ուրվականն արդեն իսկ բազմաթիվ ողջամիտ հարցերի տեղիք է տվել Սյունիքում:

Առկա տարակույսների օրինաչափ և իրավաչափ բնույթը հիմնավորելու համար որերորդ անգամ փաստենք՝ Սյունիքի արևելյան սահմանները 1920-ից ի վեր երկու անգամ արդեն սահմանազատվել–սահմանագծվել են:

Երկու դեպքում էլ Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Հայաստանի կառավարությունները ընդունել են համապատասխան հանձնաժողովների աշխատանքների արդյունքները և հաստատել դրանք:

Ասել է թե՝ Խորհրդային Միության փլուզման պահին (1991 թ.) Հայաստանի և Ադրբեջանի միջև՝ Սյունիքի արևելյան հատվածում, սահմանային վեճ գոյություն չի ունեցել:

Շարունակությունը՝ էջ 3

Արմեն Ստեփանյան. «Էներգախնայող տեխնոլոգիաները կարևոր են խոշոր բիզնեսի համար»

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կայուն զարգացման տնօրեն Արմեն Ստեփանյանի հարցազրույցը Banks.am-ին

– Պարոն Ստեփանյան, ԶՊՄԿ-ն նոյեմբերի 12-ին կայացավ Robust Armenia 2025 կոնֆերանսի գործընկերն է: Այս տարի կոնֆերանսն անց է կացվում «Արդյունավետությունը՝ Հայաստանի էներգետիկ անվտանգության բանալին» խորագրի ներքո: Ի՞նչ եք կարծում՝ որքանով են Հայաստանում գիտակցում էներգաարդյունավետության կարևորությունը:

– Էներգաարդյունավետությունը տարեցտարի ավելի մեծ նշանակություն է ստանում, և դա կայուն զարգացման հիմնական բաղադրիչներից մեկն է՝ միաժամանակ նպաստելով տնտեսական, բնապահպանական և սոցիալական նպատակների իրականացմանը: Եթե անդրադառնանք հատկապես հանքարդյունաբերության ոլորտին, ապա այն համարվում է էներգատար ոլորտներից մեկը, և էներգաարդյունավետությունն այդ պատճառով այստեղ ունի առանձնահատուկ նշանակություն: Այլևս հնարավոր չէ անտեսել էներգիայի օգտագործման արդյունավետության հարցը՝ դրա նշանակության որևէ առանձին բաղադրիչի առումով:

Օրինակ, եթե մի կողմ թողնենք, որ հումքի արդյունահանումը, տեղափոխումը և վերամշակումը ինքնին էներգատար են ու կազմում են հանքարդյունաբերական ծրագրերի ծախսերի զգալի մասը, ապա դրանց օպտիմալ օգտագործումը կարևոր է ոչ միայն տնտեսական, այլև բնապահպանական տեսանկյունից: Նվազեցնելով էներգիայի սպառումը՝ նվազեցնում ենք նաև արտանետումների ծավալները, ինչը կարևոր է բնապահպանական առումով: Կարելի է բազմաթիվ օրինակներով ցույց տալ էներգաարդյունավետության և բնապահպանության կապը:

Կարող եմ ասել, որ, այո, առնվազն խոշոր բիզնեսի համար էներգախնայող տեխնոլոգիաները և՛ շահութաբեր են, և՛ կարևոր՝ միջազգային չափանիշներին համապատասխանելու առումով: Ինչ վերաբերում է հանրության կողմից էներգիայի օգտագործման մշակույթին, ապա այդ ուղղությամբ դեռևս անհրաժեշտ է շարունակական աշխատանք՝ հանրային մտածողությունը բնական ռեսուրսների օգտագործման հարցում դարձնելու ավելի գիտակցված ու խնայող:

– Եթե խոսենք զուտ ԶՊՄԿ-ի մասին, ապա էներգաարդյունավետության բարձրացմանն ի՞նչ քայլեր են կատարվել ձեռնարկությունում վերջին տարիներին և ինչ է նախատեսվում ապագայի համար:

– Բնականաբար, ինչպես արդեն նշեցի, հանքարդյունաբերության մեջ՝ գոնե մեր ընկե-

Շարունակությունը՝ էջ 2

Հայաստանի 1000 խոշոր հարկատուները. ԶՊՄԿ-ն առաջին եռյակում է, Կապանի ԼՀԿ-ն՝ 16-րդը

Պետական եկամուտների կոմիտեն հրապարակել է 2025թ. հունվար-սեպտեմբեր ամիսների Հայաստանի 1,000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի և տուրքերի ցուցանիշները: Այդ մասին տեղեկանում ենք ՊԵԿ-ից: Ընթացիկ տարվա 9 ամիսներին մուծվել է 1.439 տրլն դրամ հարկ:

Առաջատար տասնյակ

Հրապարակված ցուցանիշների համաձայն՝ Հայաստանի խոշոր հարկ վճարողների ցուցակը գլխավորում է Մոբայլ Սենթր Արթը՝ 52.5 մլրդ դրամ, ինչը 2024թ. համադրելի ցուցանիշից ավելի է 3.37 մլրդ դրամով կամ 6.87%-ով: 2024թ. հունվար-սեպտեմբերին ընկերությունը զբաղեցրել էր 2-րդ հորիզոնականը:

Գրանդ Տոբակոն երկրորդ տեղում է՝ 45.94 մլրդ դրամով: 2024թ. ցուցանիշի համեմատ արձանագրվել է աճ 6.16 մլրդ դրամով կամ 15.47%-ով: 2024թ. հունվար-սեպտեմբերին ընկերությունը զբաղեցրել էր 3-րդ հորիզոնականը:

Երրորդ տեղում ԶՊՄԿ-ն է, որը վճարել է 36.17 մլրդ դրամ: 2024թ. նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է անկում 47.48 մլրդ դրամով կամ 56.77%-ով: 2024թ. հունվար-սեպտեմբերին ընկերությունը զբաղեցրել էր 1-ին հորիզոնականը:

Չորրորդ տեղում է Գազպրոմ Արմենիան: Ընկերության կողմից պետական բյուջե է վճարվել 34.89 մլրդ դրամ, ինչը 2024թ. 36.33 մլրդ դրամ ցուցանիշից պակաս է 1.45 մլրդ դրամով կամ 3.99%-ով: 2024թ. հունվար-սեպտեմբերին ընկերությունը նույնպես 4-րդն էր:

Հինգերորդ հորիզոնականում է Արդշինբանկը՝ 31.89 մլրդ դրամ վճարված հարկերով: 2024թ. համադրելի ցուցանիշի համեմատ արձանագրվել է աճ 23.77 մլրդ դրամով կամ 292.39%-ով: 2024թ. հունվար-սեպտեմբերին ընկերությունը զբաղեցրել էր 24-րդ հորիզոնականը:

Վեցերորդ տեղում է Ամերիաբանկը, որը պետական բյուջե է մուտքագրել 24.99 մլրդ դրամ: Սա 2024թ. համադրելի ցուցանիշից ավել է 4.55 մլրդ դրամով կամ 22.28%-ով: 2024թ. հունվար-սեպտեմբերին ընկերությունը զբաղեցրել էր 6-րդ հորիզոնականը:

Սի Փի Էս Էներջի Գրուպը յոթերորդ հորիզոնականում է՝ վճարելով 19 մլրդ դրամ: 2024թ. նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է 1.38 մլրդ դրամ կամ 7.85% աճ: 2024թ. հունվար-սեպտեմբերին ընկերությունը կրկին 7-րդ հորիզոնականում էր:

Ութերորդ տեղում է Ինտերնեյշնլ Մասիս Տաբակը, որը պետական բյուջե է մուտքագրել 18.19 մլրդ դրամ: 2024թ. նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է աճ 4.69 մլրդ դրամով կամ 34.71%-ով: 2024թ. հունվար-սեպտեմբերին ընկերությունը զբաղեցրել էր 12-րդ հորիզոնականը:

Իններորդ տեղում է Դիջիթեյնը, որը պետական բյուջե է մուտքագրել 16.7 մլրդ դրամ: 2024թ. նույն ժամանակահատվածի համեմատ գրանցվել է աճ 78.35%-ով կամ 7.34 մլրդ դրամով: 2024թ. հունվար-սեպտեմբերին ընկերությունը զբաղեցրել էր 20-րդ հորիզոնականը:

Տասնյակը եզրափակում է Սոֆթ Կոնստրակտը, որը մուծել է 16.28 մլրդ դրամ հարկ: 2024թ. համադրելի ցուցանիշի համեմատ արձանագրվել է աճ 16.88%-ով կամ 2.35 մլրդ դրամով: 2024թ. հունվար-սեպտեմբերին ընկերությունը զբաղեցրել էր 11-րդ հորիզոնականը:

Առաջին տասնյակում տեղ է զբաղեցրել մեկական ընկերություն՝ էլեկտրոնիկայի վաճառքի և հանքարդյունաբերության ոլորտներից: 2-ական ընկերությամբ ներկայացված են բանկային, տեխնոլոգիաների, էներգակիրների և ծխախոտագործության ոլորտները:

Ընդհանուր ցուցանիշներ

Ընդհանուր առմամբ՝ առաջատար 10 հարկատուների կողմից 2025թ. հունվար-հունիս ամիսներին վճարվել է շուրջ 296.56 մլրդ դրամ հարկ, ինչը 2024թ. համադրելի ցուցանիշից պակաս է 6.78%-ով կամ 21.56 մլրդ դրամով (2024թ. ցուցանիշը՝ 318.13 մլրդ դրամ):

Առաջատար 100 հարկատուների կողմից վճարված հարկերի ծավալը կազմել է 823.18 մլրդ դրամ՝ +6.64% կամ 51.24 մլրդ դրամ, իսկ 1,000 խոշոր հարկատուների կողմից մուծված հարկերի ծավալը կազմել է 1,439.34 մլրդ դրամ՝ +116.13 մլրդ դրամ կամ 8.78%:

1000 խոշոր հարկատուների կողմից մուծված հարկերի շուրջ 20.6%-ը բաժին է ընկնում առաջին 10 ընկերությանը, իսկ առաջին հարյուրին՝ 57%:

Եթե մուծված հարկերի ծավալը ներկայացնենք ԱՄՆ դոլարով (ԿԲ փոխարժեքը 2025թ. հոկտեմբերի 24-ի դրությամբ՝ 383.05 դրամ), ապա՝ առաջատար տասնյակի կողմից մուծվել է շուրջ 774.22 մլն դոլար: Առաջատար 100-ի կողմից՝ մոտ 2.15 մլրդ դոլար, իսկ 1,000-ի կողմից՝ շուրջ 3.76 մլրդ դոլար:

ARMHANQ.COM, 29.10.2025

Արմեն Ստեփանյան. «Էներգախնայող տեխնոլոգիաները կարևոր են խոշոր բիզնեսի համար»

Սկիզբը՝ էջ 1

ության օրինակով խոսելով, կարող եմ ասել, որ վերջին տարիներին մեծ աշխատանք է տարվում կիրառվող տեխնոլոգիաները ավելի էներգաարդյունավետ տարբերակներով աստիճանաբար փոխարինելու ուղղությամբ: Մեր կայուն զարգացման ռազմավարության մաս է կազմում ջերմոցային գազերի արտանետումների նվազեցումը և դրա համար մշակվել են մի քանի ուղղություններով ռազմավարական քայլեր: Դրանք երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր են, օրինակ՝ վերականգնվող էներգիայի աղբյուրներին անցման ծրագրերը, ապագայում՝ ավտոպարկի էլեկտրաֆիկացիան, էներգաարդյունավետ այլ տեխնոլոգիաների կիրառումը: Կարևոր եմ համարում նման ծրագրերը նաև մեր համայնքներում: Մեր ազդակիր համայնքներից Սյունիք համայնքում ԶՊՄԿ միջոցներով արդեն տեղադրել ենք արևային ֆոտովոլտային համակարգեր և ջրատաքացուցիչներ մոտ 200 ընտանիքի համար, ինչը հսկայական ծավալ է:

Սրա հետ մեկտեղ կարևոր եմ համարում ընդգծել, որ հանքարդյունաբերությունը կանաչ էներգետիկայի անցման հիմքն է, և կայուն զարգացման համատեքստում աշխարհում ավելի ու ավելի շատ են կարևորում ոլորտը: Շատ երկրներ հանքարդյունաբերությունը և մետաղների մատակարարման շղթան ընդգրկում են իրենց կայուն զարգացման և էներգետիկ անցման ռազմավարություններում, քանի որ չի կարող լինել էներգետիկա և կանաչ անցում առանց մետաղների: Այդ առումով Հայաստանը ունի չօգտագործված հսկայական պոտենցիալ և՛ հանքարդյունաբերության, և՛ էներգետիկայի բնագավառում:

– Ի՞նչ եք կարծում, կարելի՞ է ասել, որ մեր հասարակությունը և գործարար համայնքը սկսել են ավելի մեծ ուշադրություն դարձնել կայուն զարգացման խնդիրներին, «կանաչ տնտեսությանը»:

– Կարծում եմ աստիճանաբար գալիս է գիտակցումը, որ սա և՛ անհրաժեշտություն է, և՛ անխուսափելիություն, և երկարաժամկետ կտրվածքով նաև տնտեսական շահավետություն: Իհարկե, սա համատարած չէ և շատ անելիք կա: Խոշոր ընկերությունները, նրանք, որոնք աշխատում են դրսի շուկաների հետ՝ ավելի արագ են ադապտացվում, քանի որ անհնար է պահպանել մրցունակությունը և տեղ գրավել շուկայում՝ առանց որոշակի չափանիշներ ներդնելու: Սակայն ճնշումը պետք է գա նաև երկրի ներսից, կարգավորումներով, օրենսդրական փոփոխություններով: Ոչ թե բիզնեսի վրա լրացուցիչ բեռ դնելու միտումով, այլ հենց հայկական բիզնեսի մրցունակությունը ապահովելու նպատակով: Այսօր շատերը դա կարող են դեռ չգիտակցել, բայց կարգավորումները եվրոպական շուկաներում, նույնիսկ Չինաստանում շատ արագ են տարածվում, և շատ բիզնեսներ պարզապես չեն հասցնում ներդնել համապատասխան համակարգեր, կայուն զարգացման հաշվետվողականություն, կառավարման համակարգեր և պարզապես դուրս են մղվում շուկայից: Հայկական բիզնեսին ևս պետք է օգնել ադապտացվել:

– Ս.թ. հոկտեմբերի 3-4-ը անցկացված «Հայաստանի Հանքարդյունաբերության ֆորումի» ընթացքում ԶՊՄԿ-ն վերահաստատել էր նվիրվածությունը թափանցիկությանն ու կայուն զարգացմանը՝ ներկայացնելով 2024 թվականի կայուն զարգացման հաշվետվությունը: Ինչպիսի՞ կիրառական նշանակություն ունեն այս հաշվետվությունները ձեռնարկության ամենօրյա աշխատանքի վրա: Ավելի պարզ ասած, ի՞նչ են դրանք տալիս կոմբինատի աշխատակիցներին, համայնքին և երկրին:

– Նախ, ինչպես ասացի, կայուն զարգացման հաշվետվողականությունը մրցունակ մնալու համար անհրաժեշտություն է: Սա այն մինիմումն է, որը վաղ թե ուշ պահանջվելու է ցանկացած ընկերությունից, որը որևէ կերպ կապված է դրսում որևէ շուկայի հետ՝ անկախ նրանից՝ արտահանո՞ղ է, կամ մատակարարման շղթայի ո՞ր օղակում է: Կիրառական առումով սա հենց այն ամենամյա աշխատանքն է, որը հնարավորություն է տալիս հաշվառել, գնահատել և համեմատել բնապահպանական, սոցիալական և կառավարչական ոլորտներում ընկերության առաջընթացը և բացթողումները, հաջորդ տարվա համար շտկումները նախանշելու համար:

– Ներկայացնելով հաշվետվությունը՝ Դուք ասել էիք, որ այն «ներառում է ինչպես մեր նվաճումները, այնպես էլ բացթողումները՝ կայուն զարգացման մեր հավակնոտ նպատակներին հասնելու ճանապարհին»: Որո՞նք են այդ բացթողումները և ինչպե՞ս դրանք կարող են շտկվել:

– Շտկելու կարիք միշտ կա: Հատկապես, երբ խոսում ենք ավելի քան 70 տարվա պատմություն ունեցող ԶՊՄԿ-ի մասին: Նոր են ներդրվում բազմաթիվ բնապահպանական, կառավարչական և սոցիալական համակարգեր, շատ ժամանակ կպահանջվի դեռևս նախկինում կուտակված խնդիրները լուծելու համար: Բայց դա հնարավոր է, և տարեցտարի իրականացվում է արդիականացման ծրագիրը: Անցյալ տարի ընդունվեցին ընկերության քաղաքականությունները, այդ թվում՝ բնապահպանական և սոցիալական քաղաքականությունները, և դրանց լիարժեք ներդրումն ու կիրառումը դեռևս աշխատանք է պահանջելու: Ածխածնային հետքի կրճատման ծավալների և ժամկետների առումով հստակ թիրախներ դեռևս չունենք, և ուզում ենք այս տարի շտկել այդ բացը: Դեռևս դժգոհ եմ առողջության և անվտանգության մշակույթի ներդրումից, ինչը դեռևս հանգեցնում է միջադեպերի: Անելիքներ շատ կան: Նույնիսկ զարգացած երկրների խոշոր ընկերությունները ամեն տարի նոր նշաձողեր են դնում և լրացնում բացթողումները: Կայուն զարգացումը մշտական ադապտացիայի, փոփոխության և շտկումների կարիք ունի: Չկա ընկերություն, որ կարող է ասել, որ շտկելու ոչինչ չունի, և դա լավ է, քանի որ ապահովում է շարունակական բարելավման համար ջանքերի կենտրոնացում:

BANKS.AM, 06.11.2025

Ի՞նչ է կատարվում Սյունիքում. անհետանալու շեմին է 47 հանրակրթական դպրոց

Սկիզբը՝ էջ 1

ների՝ Կապանում՝ 12, Սիսիանում՝ 19, Տաթևում՝ 2, Գորիսում՝ 3, Տեղում՝ 3, Քաջարանում՝ 4, Մեղրիում՝ 5:

Արդեն նշվեց, որ Մեղրիում ևս կան դպրոցներ, որ միավորվելու են, կամ ընդհանրապես փակվել են: 2025-ի հուլիսին կառավարության որոշմամբ լուծարվել է Լիճք գյուղի դպրոցը: Ավելի վաղ փակվել էր նաև հարևան Տաշտուն գյուղի դպրոցը: Ծրագիրը «կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովում» է հորջորջվում, բայց այդ հնչեղ ձևակերպման մեջ կրթական համակարգը խարխլելու իրողություններ կան:

Կարճևանի միջնակարգ դպրոցն ունի 25 աշակերտ, նախատեսվում է միավորել նոր կառուցվող Ագարակի միջնակարգ դպրոցի հետ: Այժմ Կարճևանի դպրոցը, ինչպես փոխանցեց կրթօջախի տնօրեն Անժելա Աղայանը, վթարային վիճակում է, հինգ տարի է՝ պարապմունքներն անցկացվում են գյուղի բուժկետում: Կարճևանն Ագարակից հեռու է չորս կիլոմետր, այս առումով տնօրենը նշեց, որ աշակերտներին տեղափոխելու նպատակով փոխադրամիջոց պիտի հատկացնեն:

Օպտիմալացման ծրագրում ընդգրկված է նաև Ալվանքի միջնակարգ դպրոցը, որ այժմ 39 աշակերտ ունի: Վերջիններիս ծնողները տարակուսած են, թե այդքան աշակերտ ունեցող դպրոցը ինչո՞ւ պետք է միավորել մի այլ կրթօջախի, տվյալ դեպքում Շվանիձորի դպրոցի հետ, և դիմում են տարբեր ատյաններ՝ այդ կործանարար քայլը կանխելու համար: Բայց ո՞վ է լսողը...

Երբ թերթում ես միավորվող դպրոցների պատմությունը, տխուր իրողության ես առնչվում: Գյուղական դպրոցում, որտեղ ժամանակին հաճախում էր մինչև 100 աշակերտ, այժմ սովորում է 7-8-9, ասել է թե՝ միանիշ թվով աշակերտ: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ որոշ դպրոցներում ավելի շատ մանկավարժներ կան, քան աշակերտ: Կապանի տարածաշրջանի Շիկահողի միջնակարգ դպրոցը մեկ աշակերտ ունի, մինչդեռ 1970-1980-ական թվականներին աշակերտների թիվը հասնում էր 200-ի, որոշ տարիների դպրոցը գործել է երկհերթ:

Տպավորություն է, որ հայրենի կառավարությունը մոռացության է մատնել գյուղը: Անչափ տխուր է, երբ դռներն է փակում փառավոր պատմություն ունեցող դպրոցը: Խոսքը Կապանի տարածաշրջանի Շրվենանց գյուղի դպրոցի մասին է, որ տարիներ առաջ լուծարվել է, այժմ քանդուբարափ վիճակում է, և եթե անհապաղ միջոցներ չձեռնարկվեն, պատմական արժեք ունեցող այդ շենքը կվերածվի ավերակների: Դպրոցը հիմնադրվել է Բաքվի հայտնի նավթարդյունաբերող Գասպար Տեր-Մարգարյանցի տրամադրած նյութական միջոցներով, դպրոցական առաջին զանգը հնչել է 1902 թվականին, դպրոցի նավակատիքը շնորհավորել է այն ժամանակներում մեծ համարում ունեցող «Մշակ» թերթը: Ժամանակին Շրվենանցի դպրոց սովորելու էին գալիս ոչ միայն մոտակա, այլև հեռավոր՝ Սևաքար, Ձեյվա, Վաչագան, Խդրանց, Բեխ, անգամ Գորիսի տարածաշրջանի առանձին գյուղերի ուսումնատենչ մանուկներ: Դպրոցը տվել է անվանի շրջանավարտներ, որոնց միայն թվարկումն ահագին տեղ ու ժամանակ կխլի: Եվ ահա այդ հայտնի կրթօջախի ուսումնական շենքը թողնել բախտի քմահաճույքին՝ պարզապես աններելի է:

Նույն կերպ համբավավոր Լեռնաձորի դպրոցը պիտի միանա Ձագեձորի միջնակարգ դպրոցին: Այստեղ ևս տարակուսած են, քանզի կրթօջախը 78 աշակերտ ունի: Այս կրթօջախը նախորդ տարի նշել է հիմնադրման 100-ամյակը: Բացի այդ՝ մեծն մանկավարժ Ռոբերտ Գրիգորյանը՝ նույն ինքը Էջանանցին, այդ դպրոցում գիտելիքների ավանդման լավագույն, եթե չասենք օրինակելի ավանդույթներ է արմատավորել, և սրբապղծություն կլինի դրանք զրոյացնել: Կրթօջախի համբավը տարածվել էր հանրապետությունում և նրա սահմաններից դուրս, Ռոբերտ Էջանանցու շնորհիվ ստեղծվել էր երկրագիտական թանգարան, լուրջ աշխատանքներ էին տարվում բանահյուսական նշխարները մոռացությունից փրկելու համար: Դպրոցն ունի նաև հիշատակներ, դպրոցի պուրակում տեղադրված է գրքի հուշակոթող:

Բացի այդ, ժամանակակիցներն այն կարծիքն են հայտնում, որ եթե չլիներ Լեռնաձորի դպրոցը, գյուղը կարժանանար մերձակա մի քանի գյուղի (Կաթնառատ, Փուխրուտ և այլն) ճակատագրին, ասել է թե՝ կդատարկվեր՝ հանգչող փեթակի հանգույն:

Տխուր է, երբ սահմանամերձ գյուղերն են ընդգրկված այդ տխրահռչակ որոշման մեջ: Տեղի-անտեղի բարբաջում են, թե գյուղը դպրոցով է կանգուն: Ահավասիկ, Կապանի ամենամեծ Դավիթբեկ գյուղի Արամ Մանուկանի անվան դպրոցը պետք է միավորվի Արծվանիկի միջնակարգ դպրոցի հետ: Երկու գյուղը բավականին հեռու են միմյանցից, բացի այդ Դավիթբեկի դպրոցում 50 աշակերտ է սովորում, մանկավարժների 90 տոկոսն էլ տեղացի է: Եթե ձմռանն առատ տեղումներ լինեն, և ճանապարհը սառցակալի, դպրոցական երեխան ինչպե՞ս պիտի հասնի Արծվանիկ և հետ դառնա:

Ծրագրում ներառված է Սիսիանի տարածաշրջանի Լոր գյուղի դպրոցը: Այդտեղ այժմ 23 աշակերտ է սովորում: Ի դեպ, այս դպրոցը ժամանակին կառուցել է տվել Գասպար Տեր-Մարգարյանցը՝ իր կնոջ Շուշանիկի պատվին: Բարերարը զավակ չի ունեցել, պատգամել է՝ կառուցված դպրոցները թող լինեն մեր զավակները: Ինչպես «Սյունյաց երկրին» փոխանցեց դպրոցի տնօրեն Լիանա Գրիգորյանը, Լորի, ինչպես Գետաթաղի և Շենաթաղի դպրոցները միանալու են Դարբասի միջնակարգ դպրոցին:

Հենակետային է դառնում նա Վաղատինի միջնակարգ դպրոցը, որին պիտի միանան Շամբի, Որոտանի, Լծենի դպրոցները:

Սկզբում համայնքներն օպտիմալացրեցին, իսկ հիմա՝ դպրոցները, ինչը ևս ենթադրում է աշխատատեղերի կրճատում, մանավանդ, երբ այն կատարվում է դատարկվող-ամայացող գյուղերի օրինակով: Եվ դա այն դեպքում, երբ Սյունիքի գյուղերը՝ հանրապետության մյուս մարզերի համեմատությամբ, երբեք աչքի չեն ընկել բնակիչների մեծ թվով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մեղրիում կատարվելիք «արտահերթ» սահմանազատման հանելուկը. 32, թե՞ 44 կմ է Արաքսի առափնյա մեր ինքնիշխան տարածքի երկարությունը

Սկիզբը՝ էջ 1

Հիշենք և հիշեցնենք՝ առաջին անգամ սահմանազատման–սահմանագծման աշխատանքներ Սյունիքում կատարվել են 1920-ականներին՝ Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի ներկայացուցիչներից կազմված պետական հանձնաժողովի կողմից:

Զանգեզուրի գավառի և Ադրբեջանի Կարմիր Քյուրդիստան գավառի միջև սահմանները ճշտելու նպատակով ստեղծված պետական հանձնաժողովում հայկական կողմից ընդգրկված էր մեր մեծ արձակագիր Ակսել Բակունցը՝ իբրև փորձառու հողաշինարար:

Նրա զեկուցումներից և գրառումներից ակնհայտ է դառնում, թե ինչ մանրամասնությամբ են ճշտվել սահմանները:

Սյունիքի շրջանների և Ադրբեջանի արևմտյան շրջանների միջև սահմանների ճշտում՝ երկրորդ անգամ, կատարվել է 1980-ականներին. հայկական կողմը ներկայացնում էր պետական նշանավոր գործիչ Վլադիմիր Մովսիսյանը:

Այդ աշխատանքներին աջակցել են Մեղրու, Կապանի, Գորիսի, Սիսիանի շրջանների ղեկավարները, որոնց մի մասը բարեբախտաբար ողջ է. այսօր էլ նրանք պատմում–ներկայացնում են, թե ինչպիսի մանրամասնությամբ ու հիմնավորվածությամբ են կատարվել աշխատանքները:

Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների կողմից ստեղծված այդ հանձնաժողովի աշխատանքները նույնպես ավարտին են հասցվել, իսկ արդյունքները հիմք են ընդունել կողմերը (այլ հարց է, թե տվյալ փաստաթուղթն ինչո՞ւ չի գաղտնազերծվում–հանրայնացվում և ինչո՞ւ չի դրվում բանակցային սեղանին):

Այդ ամենը վերհիշելուց հետո նորից ենք արձանագրում՝ Խորհրդային Միության փլուզման պահին (1991 թ.) Հայաստանի և Ադրբեջանի միջև՝ Սյունիքի արևելյան հատվածում սահմանային վեճ գոյություն չի ունեցել:

* * *

Հաջորդ հանգամանքը. մեր հանրապետության իշխանությունները տարիներ շարունակ փորձում են համոզել, թե սահմանների ճշգրտման հարցում առաջնորդվել և առաջնորդվում են 1991 թ. դեկտեմբերի 21-ին ստորագրված Ալմա–Աթայի հռչակագրով, որի մեջ (առանց կցվող քարտեզի) պարզապես գրված է՝ «Ճանաչել և հարգել միմյանց տարածքային ամբողջականությունն ու գոյություն ունեցող սահմանների անխախտելիությունը»:

Եվ ուրեմն, եթե կողմերը ճանաչում են խորհրդային ժամանակաշրջանում գոյություն ունեցող սահմանների անխախտելիությունը, եթե 1991-ին՝ Խորհրդային Միության փլուզման պահին, մեր ու Ադրբեջանի միջև սահմանային վեճ գոյություն չի ունեցել, ապա ի՞նչն է ստիպում մեզ՝ նորից ճշտելու քանիցս ճշտված սահմանը:

Հայաստանի գործող կառավարությունն այդպես էլ չի ասում՝ արդյո՞ք առ ոչինչ են ճանաչվել 1920-ականներին և 1980-ականներին կատարված սահմանազատման–սահմանագծման աշխատանքները: Եթե այո, ապա պետական ո՞ր մարմինն ու ե՞րբ է նման որոշում կայացրել և ի՞նչ պատճառաբանությամբ:

Եթե այո, ապա ի՞նչ իմաստ ունի որպեն մեկ՝ տեղի–անտեղի, հիշել Ալմա–Աթայի հռչակագրի մասին, որի ամրագրած սկզբունքը վաղուց չի գործում:

Եթե այո, ապա ի՞նչ քարտեզով ենք առաջնորդվելու՝ հանուն Թրամփի ճանապարհի իրականացվելիք «արտահերթ» սահմանազատումը Մեղրու արևելյան հատվածում կատարելիս:

* * *

Եվ, այդքանով հանդերձ, եկեք մի պահ հավատանք ՀՀ կառավարությանը. այսինքն՝ Սյունիքի արևելյան սահմանները ճշտված չեն ու հիմա ճշտելու անհրաժեշտություն է առաջացել:

Շատ լավ...

Այդ դեպքում նոր հարցեր են առաջանում:

Եթե Սյունիքի արևելյան սահմանները ճշտված չեն, ապա ի՞նչ սկզբունքով և ինչի՞ հիման վրա ենք խորհրդային 70 տարիներին մշտապես Գորիսի շրջանի մաս կազմող Շուռնուխի արևելյան հատվածը 2021 թ. հունվարի 2-ին նվիրել Ադրբեջանին:

Եթե Սյունիքի արևելյան սահմանները ճշտված չեն, ապա ի՞նչ սկզբունքով և ինչի՞ հիման վրա ենք 2020 թ. դեկտեմբերի 18-ին հայկական զորքերը հետ քաշել Սյունիքի արևելյան սահմաններից, Գորիս–Կապան և Կապան–Ճակատեն ավտոխճուղին էլ նվիրել Ադրբեջանին:

Եթե Սյունիքի արևելյան սահմանները ճշտված չեն, ապա ի՞նչ սկզբունքով և ինչի՞ հիման վրա ենք 2021–ի մայիսին Սև լճի արևելյան հատվածը, Գորիսի տարածաշրջանի վրա ամենաիշխող՝ Գլուխ Ձագեձորո լեռնագագաթը զիջել թուրքին:

Եթե Սյունիքի արևելյան սահմանները ճշտված չեն, ապա ի՞նչ սկզբունքով և ինչի՞ հիման վրա ենք 2022-ի սեպտեմբերին Գորայքի արոտավայրերի հյուսիսային հատվածը, Մեծ Իշխանասարը, Ներքին Հանդը (երեք կողմից) զիջել Ադրբեջանին:

Եթե Սյունիքի արևելյան սահմանները ճշտված չեն, ապա ինչո՞ւ Տեղ գյուղի արևելյան մատույցները (մոտ 100 հա) 2023-ի մարտին զիջեցինք Ադրբեջանին:

Այդ ամենը, ցավոք, վկայում է այն մասին, որ Ալմա–Աթայի 1991 թ. հռչակագիրը չի գործել ու չի գործում:

Ավելի ցավալի է, որ ինքներս մեզ խաբում ենք ու մխիթարում, թե առաջնորդվում ենք այդ հռչակագրով:

Ներող եղեք, բայց իր ծավալապաշտական նկրտումների մեջ ավելի անկեղծ է Ադրբեջանը, որի ղեկավարը վաղուց է թքել Ալմա–Աթայի հռչակագրի ու Խորհրդային Հայաստանի քարտեզի վրա և մեզ շրջապատող կարևորագույն բարձունքների տերը դարձել:

Այս իրավիճակում, խոստովանենք, այլևս չենք զարմանում մեր տարածքային իշխանների ու այսպես կոչված պատգամավորների անդեմության շքերթի վրա, երբ տեղի-անտեղի, հայտարարում են, թե առաջիկա սահմանազատումից ու սահմանագծումից հետո բռնազավթված սյունիքյան տարածքները վերադարձվելու են: Եվ այդ արարածներին թվում է, թե Սյունիքում որևէ մեկն իրենց լուրջ է ընդունում:

* * *

Սյունիքում և հատկապես Մեղրու ուղղությամբ սահմանազատում–սահմանագծում կատարելու հարցում մեր մտահոգություններն արտահայտել ենք 2025 թ. օգոստոսի 14-ի հոդվածում՝ «Հյուսիսից և արևելքից արդեն իսկ օկուպացված Սյունիքը շրջափակվում է նաև հարավից, ո՞ւր մնաց ինքնիշխանության մասին մեր չդադարող բարբաջը»:

Թուրքիայում ԱՄՆ դեսպան Թոմաս Բարաքն էր առաջինը, ով բարձրաձայնեց Սյունիքով անցնելիք միջանցքը Միացյալ Նահանգներին ապապատվիրակելու մասին՝ հայտարարելով նաև՝ «Հայաստանն ու Ադրբեջանը վիճում են 32 կմ երկարություն ունեցող ճանապարհի շուրջ: Տվեք մեզ վարձակալության այդ ճանապարհը և բոլորով կօգտվենք դրանից»:

Ճանապարհի՝ 32 կմ երկարության հիշատակումն առնվազն անսպասելի ու տարօրինակ է եղել և շարունակում է մնալ կասկածելի:

Իրականում՝ Նռնաձորից մինչև Նախիջևանի սահման՝ Ծիրանաձոր (Արաքսի հունին զուգահեռ) ճանապարհի երկարությունը մոտ 44 կմ է (այդպես է՝ ըստ Խորհրդային Հայաստանի վերջին քարտեզի):

Եվ հանկարծ ԱՄՆ դեսպանը 44 կմ երկարությամբ ճանապարհի երկարությունը նվազեցնում է 12 կմ-ով և համարում 32 կմ:

Թվերի այս խաղի խորքում, ասել ենք, ադրբեջանաթուրքական հերթական որոգայթն է:

Ադրբեջանը, ըստ այդ երկրի մամուլի հրապարակումների, Նռնաձորի (երբեմնի Նյուվադիի, որ ի սկզբանե Արևիք գավառի Էռնա հայկական գյուղն էր) հատվածը վաղուց իրենն է համարում՝ 10-12 կմ խորությամբ:

Եվ ուրեմն, կարելի՞ է ենթադրել, որ Ադրբեջանում իշխող այդ տեսակետն է հաշվի առել ԱՄՆ դեսպանը, երբ Մեղրու տարածքի՝ Արաքսի առափնյա հատվածի երկարությունը համարել է 32 կմ:

Այդ ամենը հաշվի առնելով է, որ Սյունիքում իրավացիորեն տարակուսում են՝ արդյո՞ք Թրամփի ճանապարհի կառուցմանը նպաստելու պատրվակով՝ Մեղրու արևելյան սահմանի «արտահերթ» ճշգրտման հարցն առաջ է քաշել Ադրբեջանը՝ իր հերթական տարածքային պահանջը բավարարելու համար:

Սահմանազատման աշխատանքներում մեր ներկայացուցիչ Մհեր Գրիգորյանից, իհարկե, անկեղծություն չենք ակնկալում, բայց նա պարտավոր է պարզաբանել՝ ինչո՞ւ պետք է նորից սահմանազատենք–սահմանագծենք Մեղրու արևելյան սահմանը, եթե երկու անգամ պետական սահմանն այդտեղ ճշգրտվել է, եթե 1991 թ. այդտեղ Հայաստանի ու Ադրբեջանի միջև սահմանային վեճ գոյություն չի ունեցել:

Մհեր Գրիգորյանը «արտահերթ» սահմանազատման աշխատանքները սկսելուց առաջ պարտավոր է պարզաբանել ևս մեկ պարզագույն հարց՝ քանի՞ կմ երկարություն ունի Նռնաձորից մինչև Նախիջևանի սահման ընկած տարածքը՝ Արաքսի առափնյա հատվածի երկարությամբ:

Երեսուներկո՞ւ կիլոմետրն է մեր ինքնիշխանության ներքո, թե՞ Խորհրդային Հայաստանի քարտեզով հաստատված 44 կիլոմետրը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆ. ՀԱՅԱՑՔ ԱՆՑՅԱԼԻՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԻՆ

Հանրային դիվանագիտության 100-ամյակը. «Սյունյաց Երկիրը» մասնակցում էր Մոսկվայում անցկացված միջազգային վեհաժողովին

Հոկտեմբերի 26-27-ը Մոսկվայի «Ռոսիա» ազգային կենտրոնում անցկացվեց միջազգային համագործակցության համաժողով՝ նվիրված հանրային դիվանագիտության 100-ամյակին:

Համաժողովը հավաքել էր շուրջ 2000 մասնակցի, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, մշակութային, գիտական և արվեստի գործիչներ, միջազգային հարաբերությունների փորձագետներ և քաղաքացիական հասարակության զարգացման մասնագետներ՝ Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ավելի քան 60 երկրից:

Համաժողովին հրավիրված էր և մասնակցում էր նաև «Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանը:

1925 թ. ապրիլի 5-ին հիմնադրված ՎՈԿՍ-ի (Արտասահմանյան երկրների հետ արտաքին հարաբերությունների ասոցիացիա) կողմից սկսված մշակութային հարաբերությունների ավանդույթն այսօր էլ շարունակվում է: Շարունակվում է ՌԴ-ի «Ռոսսոտրուդնիչեստվո» հանրային դիվանագիտության գործակալության ներքո:

Համաժողովում հնչեց ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի ուղերձը, որը ներկայացրեց նախագահի խորհրդական Վալերի Ֆադեևը:

Տեսաուղերձով համաժողովի մասնակիցներին ողջունեցին ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը, Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլ Ա-ն:

Շնորհավորական ուղերձներում ընդգծվել է միջազգային լրագրության կարևորությունը որպես ազգերի միջև երկխոսության և փոխըմբռնման գործիք:

Համաժողովում քննարկման թեմաներն էին մշակույթի և գիտության ոլորտներում համագործակցությունը, երկրների իրական ինքնիշխանությունը, նեոգաղութատիրության և նեոնացիզմի դեմ համաշխարհային պայքարը, մարդկության առջև ծառացած մարտահրավերները:

Սամվել Ալեքսանյանը՝ «Անկեղծ տեսակետ» միջազգային մրցանակի դափնեկիր

Հանրային դիվանագիտության 100-ամյակի տոնակատարության շրջանակում՝ 2025 թ. հոկտեմբերի 26-ին, Մոսկվայում հայտարարվեցին օտարերկրյա լրագրողների և բլոգերների 4-րդ միջազգային մեդիա մրցանակի հաղթողները:

2025 թ. մեդիա մրցանակն ունեցել է 821 առաջադրում՝ 75 երկրից, այդ թվում՝ ԱՊՀ երկրներից, Աֆրիկայից, Ասիայից, Արևմտյան Եվրոպայից, Հյուսիսային և Հարավային Ամերիկայից:

2025 թ. մեդիա մրցանակն ունեցել է 821 առաջադրում՝ 75 երկրից, այդ թվում՝ ԱՊՀ երկրներից, Աֆրիկայից, Ասիայից, Արևմտյան Եվրոպայից, Հյուսիսային և Հարավային Ամերիկայից:

«Անկեղծ տեսակետ» միջազգային մեդիա մրցանակաբաշխությունն անցկացվել է վեց անվանակարգով:

Այդ մրցույթում՝ «Լավագույն հրապարակախոսական և վավերագրական նյութ» անվանակարգում, մրցանակի է արժանացել «Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանը:

Հիշեցնենք՝ «Անկեղծ տեսակետ» մեդիա մրցանակաբաշխությունը Ռուսաստանի Դաշնության՝ հանրային դիվանագիտության ոլորտում ունեցած նախաձեռնությունների մի մասն է՝ միտված բաց և համագործակցային հանրային դիվանագիտության ամրապնդմանը:

Մրցույթը, որ անցկացվել է 4-րդ անգամ, դարձել է միջազգային լրագրության կարևոր հարթակներից մեկը՝ խթանելով մարդկային, մշակութային և սոցիալական պատմությունների տարածումը, որոնք ամրապնդում են երկրների միջև կապերը և նպաստում ժամանակակից աշխարհի ավելի լավ ընկալմանը:

Մրցանակաբաշխության արարողությունն ավարտվեց միջազգային լրատվամիջոցների համագործակցությունն ամրապնդելու և գլոբալ գործընթացների բարդությունն արտացոլող պատասխանատու լուսաբանումը խթանելու կոչով:

Միջոցառումը վերահաստատեց, որ հանրային դիվանագիտությունն ու լրագրությունը կարող են մեկտեղել իրենց ջանքերն ընդհանուր նպատակի շուրջ՝ ներկայացնելու տեսակետ կամ հայացք մեր շուրջը տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

Մրցույթը կազմակերպվել էր «Ռոսսոտրուդնիչեստվո» դաշնային գործակալության կողմից, որի ղեկավար Եվգենի Պրիմակովը ելույթ ունեցավ արարողության ժամանակ՝ վերստին նշելով միջազգային մրցանակաբաշխության նպատակներն ու դրա կարևորությունը:

«Սյունյաց երկրին»՝ «Եվրասիայի» միջազգային մրցանակ

«Եվրասիա» ինքնավար և ոչ առևտրային կազմակերպության առաջին միջազգային մրցույթին հայտ էին ներկայացրել 3700 ֆիզիկական կամ իրավաբանական անձ՝ 27 երկրից: Նրանցից եզրափակիչ էին դուրս եկել 150-ը՝ 15 անվանակարգից, յուրաքանչյուր անվանակարգում՝ 10 հավակնորդ:

«Սյունյաց երկիրը» նույնպես դուրս էր եկել եզրափակիչ՝ դառնալով «Եվրասիայի ձայնը. ոգեշնչել» անվանակարգի 10 հավակնորդից մեկը:

Ամենահեղինակավոր անվանակարգերից այդ մեկը՝ «Եվրասիայի ձայնը. ոգեշնչել», նպատակ ուներ խթանելու սերունդների միջև երկխոսությունը և ժամանակակից ձևաչափերով սերունդներին փոխանցել ավանդույթներ:

Նախագծի նպատակներից էին նաև պատմության, մշակույթի և ժամանակակից կյանքի քիչ հայտնի էջերի բացահայտումն ու հանրայնացումը:

Հոկտեմբերի 29-ին Մոսկվայի «Ռոսիա» ազգային կենտրոնում տեղի ունեցավ մրցույթում հաղթողների պարգևատրման արարողություն:

Եզրափակիչ փուլ դուրս եկած 150 հավակնորդից 46-ն արժանացան հաղթողի կոչման:

Հաղթող ճանաչվեց նաև «Սյունյաց երկիրը»՝ արժանանալով նախընտրած անվանակարգի 3-րդ մրցանակին:

Մրցանակը պարբերականի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանին հանձնեց «Ռոսիա» ազգային կենտրոնի գլխավոր տնօրեն Նատալյա Վիրտուոզովան:

Սամվել Ալեքսանյան. ««Սյունյաց երկրի» միջազգային երկու մրցանակի հասցեատերն առաջին հերթին մեր Սյունիք հայրենիքն է»

Մոսկվայում հոկտեմբերի 26-ին և 29-ին միջազգային մրցանակների արժանանալուց և Սյունիք վերադառնալուց հետո զրուցեցինք Սամվել Ալեքսանյանի հետ՝ մեր շնորհավորանքը նրան փոխանցելու և հետաքրքրող որոշ հարցերի պատասխանը ստանալու նպատակով:

– Պարոն Ալեքսանյան, նախ շնորհավորում ենք Ձեզ՝ «Անկեղծ տեսակետ» և «Եվրասիայի ձայն. ոգեշնչել» միջազգային մրցանակներին արժանանալու կապակցությամբ:

– Շնորհակալ եմ անչափ: Միջազգային այդ մրցանակները գնահատանք են մեր ամբողջ խմբագրակազմին, մեր ընթերցողներին ու հետևորդներին, մեր պարբերականի բարեկամներին ու աջակիցներին: Այո, հատկապես մեր փոքրաթիվ կոլեկտիվին, որը, առանց չափազանցության, հրաշքներ է գործում:

– Ի՞նչ զգացողություն ունեիք մրցանակները ստանալու պահին:

– «Եվրասիայի» մրցանակը ստանալուց րոպեներ առաջ, երբ հաղորդավարներ Նիկոլայ Բասկովն ու Սվետլանա Զեյնալովան ներկայացնում էին «Եվրասիայի ձայն. ոգեշնչել» անվանակարգի ֆինալիստներին, «Ռոսիա» ազգային կենտրոնի մեծ դահլիճի բեմի ընդարձակ էկրանին հայերեն գրվեց «Սյունյաց երկիր», Армения...

Դահլիճը ծափահարում էր... Անհնար էր չհուզվել, մեր սրբազան Սյունիքի անունն էր հանրայնացվում...

Գրեթե նույն ջերմ մթնոլորտն էր առաջին մրցանակը հանձնելու ժամանակ: Հայաստանի պատվիրակները՝ իմ բարեկամներ Արման Աբովյանը, Աննա Ստեփանյանը, Արսեն Դումանյանը, այդ պահին մի ուրիշ տրամադրություն հաղորդեցին դահլիճին: Հարգանք նրանց. ոչ միայն իրենք էին ոգևորվել, այլ ոգևորել էին ներկաներին. տասնյակ երկրների պատվիրակներ ողջունում էին Սյունյաց աշխարհին...

Մրցանակը ստանալուց հետո, մինչև ուշ գիշեր, տոնակատարությունը շարունակվում էր, և շատ-շատ պատվիրակներ մոտենում էին ինձ ու Սյունիքի մասին տեղեկություններ հարցնում:

Մի խոսքով՝ երկու մրցանակի հանձնման արարողությունները բացառիկ հնարավորություն էին Սյունիքը ներկայացնելու գործում:

Եվ սխալված չեմ լինի, եթե ասեմ՝ «Սյունյաց երկրի» միջազգային երկու մրցանակի հասցեատերն առաջին հերթին մեր Սյունիք հայրենիքն է:

Չմոռանանք, որ «Եվրասիայի» մրցանակին արժանանալու համար հիմք էին ընդունել նաև էլեկտրոնային քվեարկության արդյունքները, որ իրականացվել էր հոկտեմբերի 6-ից 19-ը:

– Տարածված տեսանյութերում լսվում է նաև Ձեր խոսքը՝ առաջին մրցանակը ստանալու պահին: Եվ Դուք, ինչպես միշտ, կարևորեցիք հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը:

– Քանիցս առիթ եմ ունեցել ասելու՝ Սյունիքն աշխարհի այն անկյուններից է, որի բնակիչների մեծագույն փափագը խաղաղությունն է:

Սյունիքն այն երկրամասն է, որի համար անկախ պետականությունից և ինքնիշխանությունից վեր արժեք գոյություն չունի:

Եվ այդ ամենը պայմանավորված է հազարամյակների մեր պատմությամբ ու աշխարհագրական դիրքով:

Սյունիքն այն երկրամասն է, որի բնակիչների համար թանկ է ժողովուրդների բարեկամությունը: Իսկ այդ առումով առանձնահատուկ է հայ և ռուս ժողովուրդների բազմադարյա բարեկամությունը: Ավելին ասեմ՝ մեր տարածաշրջանում կայուն և արժանապատիվ խաղաղություն հաստատելու ու պահպանելու գործում Ռուսաստանի Դաշնության և Իրանի Իսլամական Հանրապետության դերն այլընտրանք չունի:

Այդ մտքերն էլ տեղ գտան իմ խոսքում:

– Հետադարձ հայացք ձգելով՝ ուրիշ ի՞նչ տպավորությունների մասին կուզեիք պատմել:

– Գիտե՞ք, երբ մեկ հարկի տակ միանգամից հավաքվում են տասնյակ ժողովուրդների ներկայացուցիչներ ու երբ օրեր շարունակ շփվում ես տարբեր երկրների, ազգերի և ազգությունների ներկայացուցիչների հետ, վերստին համոզվում ես՝ բնության մեջ ավելի մեծ արժեք կամ երևույթ, քան ժողովուրդների բարեկամությունն է, քան հանրային կամ ժողովրդական դիվանագիտությունն է, չկա:

Այդ միջավայրում, այդ շփումների ընթացքում ավելի ես համոզվում, որ պատերազմները կանգնեցնելու և ժողովուրդների խաղաղ ընթացքն ապահովելու լավագույն ուղիներից մեկը հանրային դիվանագիտությունն է:

Տպավորված եմ բոլոր միջոցառումների կազմակերպական բարձր մակարդակով, ամեն մի մանրուք նախատեսված էր:

Միջոցառումները ցույց տվեցին երիցս, որ Ռուսաստանի Դաշնությունը ժողովուրդների բարեկամության վեհ գաղափարն իրապես կրող և խորհրդանշող երկիր է:

– Ի՞նչ կուզենայիք ավելացնել ասվածին:

– Բոլոր այդ աշխատանքների գլխին հիմնականում ու նախ և առաջ կանգնած էին «Россотрудничество»-ի ղեկավար Եվգենի Պրիմակովը՝ իր աշխատակազմով, և «Եվրասիա» կազմակերպության խորհրդի նախագահ Ալյոնա Արշինովան, ինչպես և «Եվրասիայի» հոգաբարձուների խորհրդի անդամները, որոնց իմ և մեր պարբերականի ընթերցողների, հետևորդների երախտագիտությունն եմ փոխանցում:

Երբ հոկտեմբերի 29-ին ինձ հանձնվեց «Անկեղծ տեսակետ» 4-րդ միջազգային մրցույթի դափնեկրի կոչումը և երբ իջնում էի բեմահարթակից՝ ամբողջ դահլիճի ծափահարությունների ներքո, առաջինն ինձ մոտեցան և ուրախությունս, նաև հուզմունքս կիսեցին «Եվրասիայի» խորհրդի անդամ Միքայել Բադալյանն ու ՌԴ արտգործնախարարության աշխատակից, Սյունյաց աշխարհի բարեկամ Սերգեյ Չաշչիխինը, ով տևական ժամանակ Կապանում ՌԴ հյուպատոսություն բացելու առաքելության ղեկավարն է:

Ես նրանց նույնպես մեր խմբագրակազմի, մեր ընթերցողների ու հետևորդների, անձամբ իմ շնորհակալությունն եմ փոխանցում:

Այդ օրերին Հայաստանից և հատկապես Սյունիքից հարյուրավոր զանգեր էի ստանում՝ շնորհավորանքներ, մաղթանքներ, գնահատանքի ու քաջալերանքի խոսքեր:

Եվ գիտե՞ք՝ ինչն էր ուշագրավ, գրեթե բոլորն այդ մրցանակների առաջին հասցեատերը համարում էին մեր բնօրրան Սյունիքը, ինչն ինձ ավելի է ոգևորում և մղում հետագա ակտիվ ստեղծագործական աշխատանքի:

Այդ ամենը որերորդ անգամ ցույց տվեց, որ «Սյունյաց երկիրը» բոլոր սյունեցիների պարբերականն է, Սյունյաց աշխարհի մերօրյա դժվարին ընթացքի դրոշակակիրներից մեկը: Իսկ նրանք, ովքեր (այդուհանդերձ) փորձում են իրենց մանր էությամբ և բացակա ներկայությամբ խոչընդոտել իր տեսակի մեջ եզակի կանթեղի՝ «Սյունյաց երկրի» ընթացքին, վերստին հաստատում են, որ իրենք օտարական են՝ ընդամենը հանգամանքների բերումով այստեղ ժամանակավորապես հայտնված:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ

Капан отметил День народного единства

4 ноября в Доме русской книги прошла встреча, организованная дипломатами Передовой группы по открытию Генконсульства России и координатором Русского дома в Сюнике Людмилой Агаханян. Собрались школьники — члены литклуба имени Грибоедова и соотечественники из организации «Россияне». Говорили о народностях, взаимопонимании и о том, что значит быть вместе.

«Некоторые дети признались, что впервые слышат о таком празднике, — отметила Людмила Агаханян. — Им было интересно узнать, с какого года он отмечается и почему именно 4 ноября».

Гость встречи, общественный деятель и автор детских изданий Самсон Арзуманян (Арбель), рассказал о выдающихся деятелях армянского происхождения, которые раскрыли свои таланты в России и стали неотъемлемой частью её культуры. Встреча за чашкой чая получилась тёплой и искренней — просто о важном.

РУССКИЙ ДОМ АРМЕНИЯ

Փառատոնի գլխավոր իրադարձություններից էր նաև ժյուրիի կողմից ամենահամեղ կուրկուտ պատրաստողի ընտրությունը, որի արդյունքում «Կուրկուտի փառատոն-2025» մրցանակի հաղթող է ճանաչվել Կառլեն Մարտիրոսյանը՝ Ծավ գյուղից: Իսկ «Լավագույն կենաց» ասող դարձավ Արամ Հայրապետյանը:

Ամենամյա դարձած Կուրկուտի փառատոնը

Նոյեմբերի 8-ին Կապանում կայացավ աշնան ամենասպասված և ամենասիրված մշակութային իրադարձությունը՝ կուրկուտի փառատոնը:

Արդեն 6 տարի է՝ հազարավոր մարդիկ միավորվում են փառատոնի շուրջ՝ համտեսելու կապանյան անմահական կուրկուտը և դառնալու մշակութային այս կարևոր միջոցառման մասնիկը:

Մեկնարկի առաջին իսկ պահից մասշտաբային մեծ տոնախմբության վերածված փառատոնն այս տարի անցկացվել է Նորաշենիկ գյուղի վարչական տարածքում, որտեղ օրվա գլխավոր հերոսները՝ 20 վարպետ խոհարարները, ավանդույթի համաձայն, համայնքի ղեկավարի կողմից ստացել են խորհրդանշական նվերներ՝ շամփուրներ:

Ի տարբերություն նախորդ տարիների՝ այս տարվա փառատոնն անցկացվել է տոնավաճառի ձևաչափով և տարբերվում էր իր բարեգործական նպատակադրությամբ: Փառատոնի ընթացքում բոլոր տաղավարներից գոյացած շուրջ 3 218 110 ՀՀ դրամն ուղղվելու է Կապանի թիվ 3 հատուկ դպրոցի հանրակացարանում բնակվող Դավիթի և իր քույր Դիաննայի երազանքի իրագործմանը: Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի նախաձեռնությամբ որոշում է կայացվել նրանց համար բնակարան ձեռք բերելու՝ միավորելով նաև կուրկուտի փառատոնից ստացված միջոցները:

Փառատոնին առանձնահատուկ շունչ և տեսք էին հաղորդել համայնքի նախադպրոցական ուսումնական բոլոր հաստատությունների և համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհրդի կողմից պատրաստված թեմատիկ տաղավարները, որտեղ հյուրերը կարող էին գնել և համտեսել կուրկուտ, տեղում թխվող լավաշ, ավանդական թթուների տարբեր տեսակներ, ժենգյալով հաց, տնական գաթաներ, փախլավա, ինքնաեռով պատրաստված անուշահամ թեյեր, սուրճ, տարատեսակ չրեր, մուրաբաներ և ջեմեր:

Տոնակատարությունն ուղեկցվում էր համերգային ծրագրով, որի ընթացքում ելույթ են ունեցել Barbar Band-ը, Շուշան Պետրոսյանը, Արսեն Սաֆարյանն ու Արսեն Գրիգորյանը (Մրո)՝ ապահովելով ներկաների բարձր տրամադրությունը:

Այս ամենը զուգորդվում էր նաև մարզական միջոցառումներով, մասնակիցները հնարավորություն են ունեցել իրենց ուժը ցուցադրել բազկամարտի և պարանի ձգման մրցաշարերում, որտեղ հաղթողները պարգևատրվել են հավաստագրերով, մեդալներով, գավաթներով և նվերներով:

Փառատոնի գլխավոր իրադարձություններից էր նաև ժյուրիի կողմից ամենահամեղ կուրկուտ պատրաստողի ընտրությունը, որի արդյունքում «Կուրկուտի փառատոն-2025» մրցանակի հաղթող է ճանաչվել Կառլեն Մարտիրոսյանը՝ Ծավ գյուղից: Իսկ «Լավագույն կենաց» ասող դարձավ Արամ Հայրապետյանը:

Ամենահամեղ և ամենավանդական կուրկուտի փառատոնն ամեն տարի կազմակերպում և իրականացնում է Կապանի համայնքապետարանը՝ մշակույթի կենտրոնի հետ համատեղ:

Այս տարի փառատոնի կազմակերպմանը աջակցել է նաև «Կապան» բարեգործական հիմնադրամը:

ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«Աբու-Լալա Մահարի». նոր շունչ Գորիսի դրամատիկական թատրոնում

Հոկտեմբերի 21-ին Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի ունեցավ «Աբու-Լալա Մահարի» ներկայացման առաջնախաղը՝ ըստ հայ մեծանուն գրող Ավետիք Իսահակյանի համանուն պոեմի:

Անդրանիկ ներկայացումը վերածվել էր մշակութային իրադարձության, քանզի այն աչքի էր ընկնում հետաքրքիր ու ինքնատիպ լուծումներով:

Բացման խոսքում թատրոնի գլխավոր ռեժիսոր Դավիթ Հարությունյանը նշեց, որ ներկայացումը պատրաստել են թատրոնի 89-րդ թատերաշրջանի մեկնարկի և մեծ վարպետ Ավետիք Իսահակյան 150-ամյակի առթիվ. «Սա յուրատեսակ ներկայացում է. մեր հրաշալի դերասանները հաղթահարել են այն բոլոր պատնեշները, որոնք դրված էին նրանց առջև»,- ասաց ռեժիսորը:

Ներկայացումը տպավորեց հանդիսատեսին իր բովանդակային լրջությամբ ու բեմական արտահայտչամիջոցների ներդաշնակությամբ: Ստեղծագործական խմբին հաջողվել էր պոեմի խոհափիլիսոփայական ծանր ու խոր բովանդակությունը փոխանցել բեմական լեզվով՝ պահպանելով Իսահակյանի գլուխգործոցի հնչեղությունն ու արդիականությունը:

«Աբու-Լալա Մահարին» արդիական է հատկապես այսօր, համահունչ է ժամանակակից մարդու ներաշխահին, քանզի բոլորս էլ պետք է մաքրվենք, ասել է թե՝ դեպի արևը գնանք...

Հատուկ գնահատանքի են արժանի դերասաններ Սերժիկ Սայունցը, Միքայել Մաշուրյանը, Ակսել Բակունցը, Միհեր Ղազարյանը, Հարութ Բադիրյանը, Գառնիկ Մկրտչյանը, Էլմիրա Լալաբեկյանը, Աննա Խաչատրյանը և Կամո Մանանյանը, ովքեր խորությամբ ընկալել են պոեմի փիլիսոփայությունը: Նրանց խաղը տպավորիչ էր ոչ միայն արտաքուստ, այլև ներքին հոգեվիճակի ճշգրիտ փոխանցմամբ:

Ներկայացման բեմական տարբերակն ու երաժշտական ձևավորումը ևս առանձնանում էին բարձր պրոֆեսիոնալիզմով (ձևավորող՝ Դավիթ Հարությունյան):

Երաժշտական լուծումները ներդաշնակ էին բեմադրության տրամաբանությանը, որն իբրև մեկ ամբողջություն՝ միախառնելով խոսքը, շարժումն ու լռությունը՝ ստեղծել էր խորհրդավոր մթնոլորտ: Իսկ նկարիչ Քրիստինե Վարդանյանի ջանքերով յուրաքանչյուր տեսարան դարձել էր յուրօրինակ գեղարվեստական կտավ:

Առաջնախաղի ավարտին հանդիսատեսը երկարատև ծափահարություններով արժևորեց դերասանական կազմի և ստեղծագործական ամբողջ խմբի աշխատանքը:

Մեր շնորհակալությունն ենք հայտնում թատրոնի ռեժիսոր Դավիթ Հարությունյանին և տնօրեն Սյուզաննա Խաչատրյանին՝ գորիսեցի հանդիսատեսին նման բարձորակ ու տպավորիչ ներկայացում հրամցնելու համար:

Հավատում ենք՝ Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոնում դեռևս ականատես կլինենք բազում նմանօրինակ և բարձրարվեստ բեմադրությունների, որոնք նոր շունչ կհաղորդեն քաղաքի մշակութային կյանքին:

ԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Սպորտային-պարահանդեսային պարերի անդրանիկ մրցույթ-փառատոնը Մեղրիում

Նոյեմբերի 15-ին Ագարակի մշակույթի տանն անցկացվեց Մեղրի համայնքի սպորտային-պարահանդեսային պարերի անդրանիկ մրցույթ-փառատոնը:

Այն նախաձեռնվել էր «Պարի և սպորտային պարերի համահայկական խորհրդի» նախագահի, «Կաստանիետ պարային ստուդիայի» տնօրենի, միջազգային կարգի մրցավար Մարիաննա Մամյանի կողմից՝ Մեղրի համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանի աջակցությամբ, Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի հովանավորությամբ:

Մարիաննա Մամյանը շնորհակալություն հայտնեց Խ.Անդրեասյանին՝ նախաձեռնությանը ցուցաբերած մշտական աջակցության և կազմակերպական հարցերում ակտիվ ներգրավվածության համար՝ համայնքի ղեկավարին և ԱՊՄԿ-ի տնօրեն Ա. Բելյաևին հանձնելով շնորհակալագրեր:

Համայնքի ղեկավարը շնորհակալագիր հանձնեց Մ.Մամյանին՝ համատեղ մշակութային ծրագրի իրականացման համար:

Մրցաշարերի ավարտին մասնակիցները Խ.Անդրեասյանի և Մ.Մամյանի կողմից պարգևատրվեցին գավաթներով, պատվոգրերով, մեդալներով և նվերներով:

* * *

Գորիսը մրցույթում ներկայացրեց «Մեծ Հայք» պարային ստուդիայի սանուհի Սյունե Ստեփանյանը:

Նա այս անգամ հանդես եկավ ավելի բարձր՝ Silver կարգում՝ իր տարիքային խմբում զբաղեցնելով առաջին պատվավոր հորիզոնականը և արժանանալով ոսկե մեդալի, ինչպես նաև գավաթների:

Սյունե Ստեփանյանի պարուսույցը «Կաստանիետ» պարային ստուդիայի գեղարվեստական ղեկավար, միջազգային կարգի մարզիչ, Պարի և սպորտային պարերի համահայկական խորհրդի նախագահ Մարիաննա Մամյանն է: Վերջինիս շնորհիվ սպորտային պարարվեստը

նոր շունչ է ստանում Հայաստանում: Նրա հետևողական, նվիրյալ և բարձր պրոֆեսիոնալ աշխատանքը հնարավոր է դարձնում, որ այս գեղեցիկ ու պահանջկոտ արվեստը հասնի նաև Հայաստանի ամենահեռավոր համայնքներ՝ դառնալով միաժամանակ հայրենաճանաչության խթան, երեխաների ինքնադրսևորման հարթակ և շնորհալի սերնդի ձևավորման մշակութանվեր գործ:

Շնորհավորում ենք Սյունե Ստեփանյանին՝ փայլուն ելույթի, վաստակած հաղթանակի և իր պարային դպրոցն ու հայրենի քաղաքը հերթական անգամ պատվով ներկայացնելու համար:

Քաղավիացիայի կոմիտեն կասեցրել է Երևանից Կապան թռչող «Նովէյրի» վկայականի գործողությունը

ՀՀ քաղավիացիայի կոմիտեն կասեցրել է Երևան-Կապան-Երևան թռիչքների իրականացմամբ հայտնի «Նովէյր» ավիաընկերության օդանավ շահագործողի վկայականի (ՕՇՎ) գործողությունը: Սա այն փաստաթուղթն է, առանց որի ոչ մի ավիաընկերություն չի կարող կոմերցիոն գործունեություն ծավալել:

ՔԱԿ-ը «Նովէյրի» վկայականի գործողությունը կասեցրել է հոկտեմբերի 27-ին 6 ամսով՝ մինչև 2026 թ. ապրիլի 27-ը:

Կոմիտեի այս քայլը գործող օրենսդրության պահանջ է: Կառավարության կողմից ընդունված ՕՇՎ տալու կարգը սահմանում է, որ վկայական ստանալու կամ այն վավեր պահելու համար տվյալ փոխադրողը պետք է լինի թռիչքների համար պիտանի առնվազն մեկ օդանավի սեփականատեր կամ վարձակալ (ենթավարձակալ) կամ էլ կնքած լինի առնվազն մեկ պիտանի օդանավի ձեռքբերման, վարձակալության կամ ենթավարձակալության մասին մտադրությունների հուշագիր:

«Նովէյրը» ունի 1 օդանավ՝ չեխական արտադրության L-410UVP-E20 տիպի ինքնաթիռ (ՀՀ գրանցումը՝ EK-4117):

Ինչպես արդեն գրել ենք, սեպտեմբերի 3-4-ին EK-4117-ը Երևանից թռել է չեխական Բռնո, որտեղ այժմ տեխնիկական սպասարկում է անցնում: Ավիաընկերության տնօրեն Կարեն Վարդանյանը «հետքին» հայտնել է, որ եթե այս տարվա մարտ-ապրիլ ամիսներին ինքնաթիռը կրկին Չեխիայում տեխսպասարկում էր անցնում 300 թռիչքաժամ շահագործվելուց հետո (թռիչքաժամային սպասարկում), ապա այժմ անցնում է 10 տարվա օրացուցային սպասարկում: Նկատենք, որ գրող Համո Սահյանի անունը կրող ինքնաթիռն արտադրվել է 2015-ին, այսինքն՝ օրացուցային սպասարկում անցնում է առաջին անգամ:

Ըստ Վարդանյանի՝ պլանային սպասարկման աշխատանքները կտևեն 4-5 ամիս, և եթե այդ ընթացքում «Նովէյրը» չկարողանա վարձակալել այլ օդանավ, ինչի ուղղությամբ աշխատում է, ապա Երևան-Կապան-Երևան չվերթը կվերականգնվի L-410-ի վերադարձից հետո միայն:

ՔԱԿ-ի կայքի համաձայն՝ հոկտեմբերի 3-ի դրությամբ (Չեխիա մեկնելուց 1 ամիս անց) EK-4117-ը դեռ պիտանի էր թռիչքների համար, սակայն եթե հոկտեմբերի 27-ին ՔԱԿ-ը կասեցրել է ավիափոխադրողի վկայականը, նշանակում է, որ վերջինիս միակ ինքնաթիռը թեկուզ ժամանակավոր պիտանի չէ թռիչքների համար:

Նկատենք, որ «Նովէյրի» ՕՇՎ-ն ուժի մեջ է մինչև 2040 թ. հոկտեմբեր, սակայն եթե մինչև գալիք տարվա ապրիլի 27-ը ավիափոխադրողը չունենա թռիչքների համար պիտանի գոնե մեկ օդանավ (սեփականությամբ, վարձակալությամբ կամ ենթավարձակալությամբ) կամ առնվազն օդանավ գնելու, վարձակալելու, ենթավարձակալելու հուշագիր ստորագրած չլինի, ապա կզրկվի ՕՇՎ-ից:

Հիշեցնենք, որ EK-4117-ն սեփականության իրավունքով պատկանում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»–ի բարեգործական հիմնադրամին: Վերջինս նաև «Նովէյրի» սեփականատերն է:

Եթե ամեն ինչ ընթանա ըստ նախատեսվածի, ապա L-410-ի տեխսպասարկումը պետք է որ ավարտվի մինչև 2026-ի գարուն, ինչից հետո այն կրկին պատրաստ կլինի թռիչքների: Այս պարագայում «Նովէյրը» ՕՇՎ-ից չի զրկվի: Բնականաբար, կա նաև երկրորդ տարբերակը՝ փոխարինող օդանավի վարձակալությունը, ինչի ուղղությամբ, ըստ Կարեն Վարդանյանի, բանակցություններ են ընթանում: Երբ «Նովէյրը» նոր օդանավի վարձակալության մասին թեկուզ հուշագիր ստորագրած լինի, ՔԱԿ-ը կվերականգնի ավիաընկերության ՕՇՎ-ի գործողությունը:

«Նովէյրը» Երևան-Կապան-Երևան երթուղով կոմերցիոն փոխադրումներ է իրականացնում 2023-ի օգոստոսից: 2023-ի ընթացքում ավիաընկերությունը տեղափոխել է 207 ուղևորի, 2024-ին՝ 1365, իսկ 2025-ի հունվար-սեպտեմբերին՝ 2096 ուղևոր: Սա ինքնաթիռ շահագործող միակ ավիաընկերությունն է Հայաստանում, որ ներքին թռիչքներ է կատարում, իսկ Երևան-Կապան-Երևան երթուղին առայժմ միակ ներքին չվերթն է մեր երկրում:

HETQ.AM, 10.11.2025

Ինչո՞ւ 2020 թ. նոյեմբերի 9-ին հաջորդած խռովահույզ օրերին հրաժարական տվեց Սյունիքի արժանավոր մարզպետ Հունան Պողոսյանը

Վերջին օրերին Սյունիքում վերստին քննարկման առարկա է դարձել հարցը, թե ինչո՞ւ է 2018 թ. հոկտեմբերի 16-ից Սյունիքի մարզպետի պաշտոնը զբաղեցնող, 44-օրյա պատերազմի ժամանակ Սյունիքի մարզն արժանապատվորեն ու խոհեմությամբ առաջնորդած Հունան Պողոսյանը 2020 թ. դեկտեմբերի 3-ին (իր դիմումի համաձայն) պաշտոնաթող եղել:

Հրաժարականին հաջորդած օրերին Սյունիքում փորձում էին հասկանալ իրականությունը՝ ինչո՞ւ ծանրագույն այդ պահին Հունան Պողոսյանն այլևս անհնար համարեց հետագա պաշտոնավարումը: Հնչող հարցերից մեկն այսպիսի բովանդակություն ուներ՝ անհամաձայնություն նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայի ակտի՞ն, թե՞ կառավարման ճգնաժամից ելք չտեսնելու հետևանք...

Տարիներն անցան, և թվում էր, թե հարցն այլևս մոռացված է, բայց...

Հինգ տարի անց, ինչպես տեսնում ենք, նոր լույս է սփռվում Սյունիքի ամենանշանավոր մարզպետներից մեկի՝ գեներալ-լեյտենանտ Հունան Պողոսյանի հրաժարականի իրական պատճառների վրա:

Պարզվում է՝ 2020 թ. նոյեմբերի 9-ից հետո (Ադրբեջանի պահանջով) մեզանում քննարկումներ են սկսվել Սյունիքի արևելյան սահմանի մարտական մեր դիրքերն Ադրբեջանին հանձնելու վերաբերյալ:

Հարցը, թեև չափազանց կարևոր էր մեր երկրի արևելյան սահմանների անվտանգության, Հայաստանի Հանրապետության անկախության և ինքնիշխանության ապահովման տեսակետից, չի քննարկվել երկրի Անվտանգության խորհրդում:

Հարցը 2020-ի նեյեմբերի վերջին քննարկվել է մեկ այլ ձևաչափով, որին մասնակցել են Անվտանգության խորհրդի որոշ անդամներ, ՀՀ ԱԳ նախարարն ու նրա տեղակալը, ինչպես նաև Սյունիքի մարզպետը:

Քննարկման արդյունքում, ի վերջո, հավանություն է ստացել հակահայկական-հակասյունիքյան տեսակետը, որի հիման վրա էլ 2020 թ. դեկտեմբերի առաջին օրերին ստորագրվել է հայտնի եռակողմ հուշագիրը (Հայաստանի կողմից ստորագուցիչ հուշագիրը ստորագրել է Պաշտպանության նախարար Վաղարշակը):

Այդ հուշագրով է, որ 2020 թ. դեկտեմբերի 18-ին Սյունիքի արևելյան սահմանի մարտական մեր դիրքերը նվիրվեցին Ադրբեջանին:

Այդ հուշագրի 5-րդ հոդվածով է, որ Գորիս-Կապան մայրուղու Գորիս-Դավիթբեկ հատվածը նույնպես նվիրվեց Ադրբեջանին:

Սյունիքում այս օրերին թևածող խոսակցությունների համաձայն՝ խելահեղ այդ համաձայնությանը դեմ է եղել Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը: Եվ որպեսզի կասեցնի հակասյունիքյան այդ հուշագրի ընդունումը՝ նոյեմբերի 30-ին հրաժարականի դիմում է ներկայացրել՝ կարծելով, որ ողջամտությունը կհաղթի:

Սակայն հակասյունիքյան համաձայնության կողմնակիցները կանգ չառան, իսկ դեկտեմբերի 3-ին Հունան Պողոսյանն ազատվեց Սյունիքի մարզպետի պաշտոնից:

Իհարկե, 2020 թ. դեկտեմբերին տեղի ունեցած հակասյունիքյան դավադրությունը դեռ քննարկվելու է և ամբողջ ճշմարտությունը (ի վերջո) ջրի երես է դուրս գալու:

Ըստ հուշագրի՝ 2025 թ. դեկտեմբերին Հայաստանն ու Ադրբեջանը պետք է վերանայեն 2020-ի դեկտեմբերյան այդ ստորագուցիչ փաստաթուղթը, որին Սյունիքում սպասում են...

Մինչ այդ բազմաթիվ սյունեցիներ իրենց անկեղծ երախտագիտությունն են հայտնում գեներալ-լեյտենանտ Հունան Պողոսյանին, ով փորձել է այդկերպ տեր կանգնել Սյունիքին՝ շատ լավ իմանալով, որ հրաժարականից հետո կարող է և հետապնդման թիրախ դառնալ:

Հունան Պողոսյանի արժանապատիվ վարքը հիշատակելի է մեկ այլ առումով ևս. նրա հեռանալուց հետո (մինչև օրս) Սյունիքում չունեցանք որևէ դեպք, որ մարզը ներկայացնող իշխանավորը կամ օրենսդիր մարմնում Սյունիքի մարզն իբր ներկայացնող իշխանականները (երկրի ղեկավարի հետ հանդիպումների ու քննարկումների ժամանակ) համարձակվեն բարձրացնել իրական Սյունիքին մտահոգող հիմնախնդիրներից գոնե մեկը:

14.11.2025

ԿԳՄՍ նախարարության մի պարզաբանման առիթով

Գորիսում գործող պետական երկու քոլեջի միավորման անհեթեթ ու մոգոնված նախագիծը շարունակում է մնալ հանրության ուշադրության կենտրոնում:

Ասում են՝ քոլեջը գործելու է Գորիս քաղաքի այս-այս հասցեներում գտնվող ուսումնական մասնաշենքերում: Բայց հոկտեմբերի 3-ին տնօրենի ժ/պ նշանակված տիկինն անցած 40 օրում՝ մեկ րոպեով անգամ, ոտք չի դրել նշված հասցեներում: Տիկին Ժաննա, կրկնում ենք՝ գոնե գիտե՞ք՝ որտեղ է և ինչով է զբաղված գոյություն չունեցող քոլեջի տնօրենի պաշտոնակատար նշանակված անձնավորությունը:

Խնդրո առարկայից բխող և պատասխան չստացած բազմաթիվ հարցեր ժամանակ առ ժամանակ արծարծվում են նաև մայրաքաղաքային մամուլի էջերում:

Նոյեմբերի 7-ին Mediahub-ը հրապարակել էր ՀՀ ԿԳՄՍ նախարարության այսպես կոչված պատասխանը՝ տվյալ լրատվամիջոցի բարձրացրած հարցին՝ «Ինչպե՞ս է ստացվում, որ դեռևս չկառուցված քոլեջում տնօրեն է նշանակվում»:

Նախարարության պատասխանում նշվում է մասնավորապես՝ ««Գորիսի պետական քոլեջ» և «Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ները միաձուլման ձևով վերակազմավորվել են՝ ստեղծելով «Գորիսի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ:

ԿԳՄՍ նախարարի 2025 թ. հոկտեմբերի 3-ի N 175-Ա/1 հրամանով Արմինե Շահումի Կոլյանը նշանակվել է քոլեջի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

Քոլեջը ժամանակավորապես գործունեություն է իրականացնելու Գորիսի Կոմերիտմիության 2/3 հասցեում և Գորիս համայնքի Կապանի խճուղի 34 հասցեում գտնվող՝ Գորիսի N 2 հիմնական դպրոցի 2-րդ ուսումնական մասնաշենքում՝ մինչև քոլեջին ամրացված Գորիս քաղաքի Առաքելյան 32 հասցեում գտնվող ուսումնական մասնաշենքի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների ավարտը»:

Առաջին հայացքից անմեղ այդ պատասխանը, սակայն, լրջագույն մի քանի հարց է առաջացնում:

Նախարարությունն ասում է՝ Գորիսի երկու քոլեջը միաձուլման ձևով վերակազմավորվել են՝ ստեղծելով «Գորիսի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ:

Լավ, ընդունենք նախարարի գիտելիքները չեն հերիքում կամ չեն բավարարում գիտակցելու պարզագույն հանգամանքը կամ ճշմարտությունը, որ նոր ՊՈԱԿ-ը ստեղծված կարող է համարվել պետական ռեգիստրում գրանցման պահից: Բա նախարարությունում գրագետ մեկը չկա՞, որ նրա ձեռքը բռնի...

Եվ ուրեմն՝ ՀՀ գործող օրենքների համաձայն դեռևս՝ մեր հանրապետությունում չկա «Գորիսի բազմագործառութային քոլեջ» անունով ՊՈԱԿ՝ որքան էլ նախարարությունն աղմկում է և ինքն իրեն մխիթարում:

Հասկանում ենք՝ հանրապետությունում հիմա թրենդ է կամ նորաձև է խաբելը–ստելը, բայց ստել այդքան ակնհայտ՝ մարդկային երևակայության մեջ չի տեղավորվում:

Այնուհետև, նախարար Ժաննա Անդրեասյանը դեռևս չստեղծված, գոյություն չունեցող քոլեջի տնօրենի պաշտոնակատար է նշանակում: Նկատի ունենք ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թ. հոկտեմբերի 3-ի N175-Ա/1 հրամանով կատարված նշանակումը:

Եվ հարց է ծագում՝ անձնական ի՞նչ շահ է ունեցել կամ ունի նախարարը, որ հակառակ ՀՀ օրենքների՝ ազդարարում է ինչ–որ ՊՈԱԿ-ի գոյության մասին և դեռևս գոյություն չունեցող այդ կրթական հաստատության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակում:

Հաջորդ հարցը՝ որտե՞ղ է և ինչո՞վ է զբաղված նախարարի կողմից տնօրենի ժ/պ նշանակված անձնավորությունը:

Ասում են՝ քոլեջը գործելու է Գորիս քաղաքի այս-այս հասցեներում գտնվող ուսումնական մասնաշենքերում: Բայց հոկտեմբերի 3-ին տնօրենի ժ/պ նշանակված տիկինն անցած 40 օրում՝ մեկ րոպեով անգամ, ոտք չի դրել նշված հասցեներում:

Տիկին Ժաննա, կրկնում ենք՝ գոնե գիտե՞ք՝ որտեղ է և ինչով է զբաղված գոյություն չունեցող քոլեջի տնօրենի պաշտոնակատար նշանակված անձնավորությունը:

Ինչպե՞ս եք նրան վարձատրելու և ինչի՞ համար եք վարձատրելու, ինչպե՞ս եք օրինականացնելու նրա բացակայությունները, եթե, իհարկե, Ձեզ համար նշանակություն ունի ՀՀ աշխատանքային օրենսգիրքը:

Տիկին նախարար, ուրիշ և ավելի կարևոր հարց էլ կա: Աշխարհի ամենանշանավոր բառարանները, միջազգային նշանակության իրավական փաստաթղթերը հուշում են՝ հովանավորչությունը կոռուպցիա ասվածի թիվ 1 և ամենավտանգավոր հատկանիշն է:

Չենք ուզում դրանից բխող եզրակացություններ անել՝ նկատի ունենալով, որ դա պետական հայտնի մարմինների գործն է լինելու եթե ոչ այսօր, ապա վաղը: Բայց հարց բարձրացնել ՝ մեզ թույլ ենք տալիս:

Արդյո՞ք հովանավորչություն չէ Ձեր արածը...

Դուք չստեղծված, գոյություն չունեցող քոլեջի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար եք նշանակում:

Դուք գործող երկու քոլեջի կոլեկտիվներին չեք պարզաբանում, թե որ արժանիքն եք հաշվի առել կամ հիմք ընդունել՝ տվյալ անձնավորությանը տնօրենի ժ/պ նշանակելով. կառավարման փորձ չունի, միջին մասնագիտականում երբեք ոտք չի դրել: Կամ Ձեզ չի՞ մտահոգել գլխավորը՝ հազար տարվա դասախոսական աշխատանքի փորձ ունեցողներին, ճանաչված մանկավարժներին ո՞նց է գլխավորելու կյանքում քոլեջի երես չտեսած և իր իսկ փոքրիկ միջավայրում ճանաչում չունեցող տիկինը:

Դուք չիմանալու-չտեսնելու եք տալիս ամոթալի փաստը՝ Ձեր կողմից հորինված տնօրենի ժ/պ-ն անցած քառասուն օրում չի կատարել գոյություն չունեցող իր պարտականությունները:

Այս պահին ավելորդ ենք համարում քննարկել Գորիսում լայնորեն թևածող տեսակետները, թե հնարավոր անձնական ինչ շահագրգռվածությամբ է ԿԳՄՍ նախարարն անտեսում ՀՀ գործող օրենքները:

Եվ, այդուհանդերձ, կրկնում ենք մեր համոզմունքը՝ հայոց անկախ և ինքնիշխան երկրում՝ եթե ոչ այսօր, ապա վաղը քննվելու է նախարար Ժաննա Անդրեասյանի դերակատարությունը Գորիսի երկու քոլեջի կազմաքանդման, միջին մասնագիտական կրթական համակարգը Գորիսում ցաքուցրիվ անելու գործում:

Իսկ նախարարությունից օրումեջ հնչեցվող հավաստիացումները, թե ԿԳՄՍ նախարարությունը գործում է ՀՀ օրենքներով՝ այս դեպքում ընդամենը պարզունակ հնարք է՝ Գորիսի երկու քոլեջի կազմաքանդման հաշվին առերևույթ տեղի ունեցող կոռուպցիոն դրսևորումները ծածկելու և հանրության ուշադրությունը շեղելու համար:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
10.11.2025

Իրանը վերանայո՞ւմ է իր դիրքորոշումը «Զանգեզուրի միջանցքի» հարցում

Կապանում Իրանի հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամինը քննարկել է Իրանի և Հայաստանի միջև դիվանագիտական և տնտեսական ամուր կապերը՝ ներկայացնելով տարածաշրջանային ենթակառուցվածքային նախագծերը, առևտրային զարգացումները և երկրի առջև ծառացած բնապահպանական մարտահրավերները, հաղորդում է The Armenian Report-ը:

Իրանը հայտարարել է, որ որևէ մտահոգություն չունի «Trump Route for International Peace and Prosperity» (TRIPP) նախագծի վերաբերյալ, որը ներառում է TRIPP ճանապարհի կառուցումը Հայաստանի հարավում:

ՀՀ ԱԳ նախարար արարատ Միրզոյանը նախկինում հայտարարել էր, որ Թեհրանը նախագիծը չի դիտարկում որպես սպառնալիք: Իրանի պաշտոնյաները հաստատել են, որ երկու երկրների միջև բարձր մակարդակի քննարկումներ և շարունակական խորհրդակցություններ են տեղի ունենում տարածաշրջանում տեղի ունեցող ցանկացած զարգացումը քննարկելու համար:

Իրանը շեշտում է, որ քանի դեռ իր շահերին սպառնալիք չկա, ինքը մտահոգության պատճառ չի տեսնում: Երկու երկրներն ունեն հազարամյակների պատմություն ունեցող բարեկամական հարաբերություններ:

13.11.2025

Իրանի ԱԳ նախարար Աբբաս Արաղչին հայտարարել է, որ տարածաշրջանի սահմանների և աշխարհաքաղաքականության ցանկացած փոփոխություն անընդունելի է, և որ անվտանգությունն ամենալավ կերպով ապահովվում է տարածաշրջանային համագործակցության միջոցով, այդ թվում՝ «3+3» ձևաչափով, հաղորդում է «Тасним новости»-ն:

Նրա խոսքով՝ «Զանգեզուրի միջանցքից» Իրանի համար ուղղակի սպառնալիք չկա, և Թեհրանն այս հարցում անմիջական կապի մեջ է:

Արաղչին ընդգծել է, որ բանակցությունները մնում են ազգային շահերին հասնելու և անվտանգությունն ապահովելու հիմնական գործիքը, և որ Իրանը պետք է պատրաստ լինի ցանկացած մարտահրավերի, այդ թվում՝ ռազմական: Նա նշել է, որ երկիրը կախված չէ ոչ Արևելքից, ոչ Արևմուտքից, հույսը դնում է իր սեփական ժողովրդի վրա և շարունակում է իր ռազմավարական գործընկերությունը Չինաստանի և Ռուսաստանի հետ:

Իրանի արտգործնախարարը նաև խոսել է Իրանի դիրքորոշման մասին՝ համատեղ համապարփակ գործողությունների ծրագրի վերաբերյալ:

«ԱՄՆ-ն դուրս է եկել ծրագրից և վերականգնել պատժամիջոցները, մինչդեռ Իրանը շարունակում է պաշտպանել իր միջուկային իրավունքները, այդ թվում՝ ուրանի հարստացումը», - ասել է Արաղչին:

Նա հավելել է, որ Իրանի հանձնառությունը խրախուսում է տարածաշրջանային երկրներին՝ համագործակցել, և նրա որոշումը՝ մնալու համատեղ համապարփակ գործողությունների ծրագրում, մնում է ուժի մեջ:

06.11.2025

«Արևմտյան Ադրբեջան» նարատիվի տարածումը հիմք է՝ հայկական տարածքի նկատմամբ պահանջների համար

OC Media-ի կողմից ուսումնասիրված արտահոսած փաստաթղթերը բացահայտում են, թե ինչպես է Ադրբեջանի նախագահի աշխատակազմը համակարգել և ֆինանսավորել «Արևմտյան Ադրբեջան» նարատիվի միջազգային տարածումը. մի արշավ, որը, թեև ձևակերպվում է որպես մարդասիրական, հիմք է ստեղծում հայկական տարածքի նկատմամբ հնարավոր իռեդենտիստական պահանջների համար: Ինչպես նշել է կայքը, վերջին տարիներին Ադրբեջանը սկսել է «Արևմտյան Ադրբեջան» հայեցակարգի շուրջ կենտրոնացած արշավ՝ մի տերմին, որը վերաբերում է ոչ թե իր սեփական տարածքին, այլ՝ Հայաստանի Հանրապետության մի մասին կամ ամբողջին: Արշավը ձևակերպվում է որպես մարդասիրական ջանք՝ Խորհրդային Միության փլուզման ժամանակ Հայաստանից տեղահանված ադրբեջանցիների «անվտանգ և արժանապատիվ վերադարձին» աջակցելու համար: Ժամանակի ընթացքում «Արևմտյան Ադրբեջան» նարատիվը վերածվել է պետության կողմից ուղղորդվող հաղորդակցման ռազմավարության: Նախաձեռնությունն այժմ երբեմն օգտագործվում է որպես հռետորական գործիք Բաքվի և Երևանի միջև շարունակվող հակամարտությունում: Անկախ փորձագետները, այդ թվում ՝ տարածաշրջանային վերլուծաբան Թոմաս դե Վաալն, այս խոսույթում բացահայտել են հստակ իռեդենտիստական ենթատեքստեր:

OC Media-ի կողմից ձեռք բերված Ադրբեջանի կառավարության արտահոսած փաստաթղթերը ցույց են տալիս, որ այս քննարկումը սերտորեն համակարգվում և աջակցվում է Ադրբեջանի նախագահի աշխատակազմի կողմից՝ չնայած հրապարակայնորեն այն ղեկավարվում է «Արևմտյան Ադրբեջանի համայնքի» (WAC) կողմից: **«Ադրբեջանի կառավարությունը ձգտում է մշտապես կենդանի պահել ազգայնական եռանդը: Այն ծառայում է որպես գործիք՝ հասարակական կարծիքը մոբիլիզացնելու և մարդկանց սոցիալական խնդիրներից ու նրանց զրկված իրավունքներից շեղելու համար: Ավելին, այն գործում է որպես Դամոկլեսյան սուր՝ Հայաստանին վախեցնելու համար»,** – OC Media-ին հայտնել է Փարիզի քաղաքական հետազոտությունների ինստիտուտի փորձագետ Ալտայ Գոյուշովը: Փաստաթղթերը ցույց են տալիս, որ նախագահի աշխատակազմն անմիջականորեն ֆինանսավորել և վերահսկել է քարոզարշավը՝ կազմակերպելով համաժողովներ, վարձելով հաղորդակցության խորհրդատուներ և պատրաստելով PR նյութեր: Աշխատանքների կենտրոնում է «Հայաստանից արտաքսված ադրբեջանցիների անվտանգ և արժանապատիվ վերադարձի ապահովումը. գլոբալ համատեքստ և արդար լուծում» վերնագրով բարձր մակարդակի միջազգային համաժողովը, որը տեղի է ունեցել Բաքվում 2023 թվականի դեկտեմբերի 5-6-ը:

Ադրբեջանը պետական միջոցներից ծախսել է ավելի քան 109 միլիոն դոլար՝ ներառյալ հյուրանոցային կացության, աուդիովիզուալ արտադրության, բրենդավորման և բովանդակության տարածման թվային հարթակի ստեղծման համար: Հյուրընկալվել են առնվազն 34 օտարերկրյա մասնակիցներ Եվրոպայից, Ասիայից և Մերձավոր Արևելքից: Հյուրերի թվում էին իտալական և հունական համալսարանների գիտնականներ, ռուսական հաստատությունների վերլուծաբաններ, ինչպես նաև Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի ներկայացուցիչը և նախկին խորհրդականը Դոնեցկից: Որոշ մասնակիցներ արդեն իսկ Բաքվում էին, այդ թվում՝ պետական կառավարվող ADA համալսարանի օտարերկրյա գիտնականներ: Համաժողովից ընդամենը մի քանի օր առաջ կառավարության կողմից ֆինանսավորվող «Ռազմավարական հաղորդակցությունների կենտրոնը» պայմանագիր էր կնքել պետական աջակցությամբ գործող «Վիրտուալ Արևմտյան Ադրբեջան» պորտալում պատմողական բովանդակություն տեղադրելու համար: Նրանց դերն էր ապահովել, որ համաժողովի քննարկումներն ու եզրակացությունները հասնեն միջազգային լրատվամիջոցներին: Այդումենայնիվ, քիչ մասնակիցներ են հրապարակայնորեն անդրադարձել համաժողովին կամ դրա թեմաներին, և միջազգային լուսաբանումը սակավ է եղել: **«Ադրբեջանի կառավարությունը երկար ժամանակ կիրառում է իռեդենտիստական հռետորաբանություն Հայաստանի նկատմամբ՝ հայտարարելով Երևանը և Զանգեզուրը պատմականորեն ադրբեջանական տարածքներ»,** – բացատրել է Գոյուշովը:

Լեռնային Ղարաբաղի Լաչինի միջանցքի շրջափակման սկսվելուց ընդամենը մի քանի շաբաթ անց՝ 2022 թվականի վերջին, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը նման խոսույթ է կիրառել ազգային հեռուստատեսությամբ հեռարձակվող իր ելույթի ժամանակ: Նա Հայաստանն անվանել է «պատմական ադրբեջանական հող»:

2025 թվականի հունվարին, երբ ընթանում էին խաղաղության պայմանագրի շուրջ բանակցությունները, Ալիևն էլ ավելի սրեց իր դիրքորոշումը:

Ադրբեջանական պետական լրատվամիջոցներին տված երկար հարցազրույցում նա Հայաստանը որակեց որպես «ֆաշիստական պետություն»՝ «ադրբեջանցի փախստականների վերադարձը չընդունելու պատճառով»: Հետագայում հարցազրույց վարողը հավելել է, որ Ալիևը իր նախորդ երկու ռազմավարական նպատակներին՝ «Լեռնային Ղարաբաղի ազատագրմանը և նրա վերակառուցմանն» ավելացրել է երրորդը՝ «Արևմտյան Ադրբեջանի համայնքի վերադարձի ապահովումը Հայաստան»: Այնուամենայնիվ, 2025 թվականի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում ԱՄՆ-ի միջնորդությամբ կազմակերպված գագաթնաժողովից հետո, որտեղ հայ և ադրբեջանցի առաջնորդները նախաստորագրեցին, բայց չստորագրեցին խաղաղության պայմանագրի նախագիծը, Արևմտյան Ադրբեջանի հռետորաբանությունը մեղմացավ:

Լայպցիգի համալսարանի դոկտորանտ Վաֆա Նագիևան նշել է. «Իր աշխարհաքաղաքական գործառույթից այն կողմ՝ Արևմտյան Ադրբեջանի դիսկուրսը ծառայում է որպես հետպատերազմյան նարատիվի խորհրդանշական ընդլայնում: Այն տեղահանության հիշողությունը վերածում է բարոյական լեգիտիմության և կոլեկտիվ ինքնության մի ձևի»: Նա հավելել է, որ դիսկուրսը կարող է օգտագործվել բազմաթիվ նպատակներով: **«Այս ռազմավարությունը հասարակությանը հուզականորեն մոբիլիզացված է պահում անավարտ արդարադատության գաղափարի շուրջ և ամրապնդում է պետության հաղորդակցական վերահսկողությունը թե՛ երկրի ներսում, թե՛ արտերկրում»,** – նշել է Նագիևան: Սակայն այս դիսկուրսը ամբողջությամբ չի վերացել:

Հոկտեմբերի սկզբին ADA համալսարանը ֆինանսավորել է «Արևմտյան Ադրբեջանի» մասին գրքի հրատարակումը, իսկ Վարշավայում ԵԱՀԿ համաժողովի ժամանակ Ադրբեջանը կազմակերպել է թեմային նվիրված լրացուցիչ միջոցառում: Նույն ամսվա վերջին Գերմանիայում ևս կազմակերպվել է միջոցառում այս թեմայով: Միջոցառման նպատակն էր բարձրացնել Արևմտյան Ադրբեջանի վերաբերյալ իրազեկվածությունը: Հաջորդ օրը նմանատիպ միջոցառում է կազմակերպվել Բրյուսելում: Ադրբեջանի իշխող կուսակցության պատգամավոր Ազիզ Ալաքբարլին հոկտեմբերի 26-ին նշել է, որ Հայաստանը «այլ ընտրություն չունի, քան հաշվի նստել Ադրբեջանի և նրա նախագահի հետ», հակառակ դեպքում՝ կարող է «վտանգել հայկական պետության գոյությունը»: Նրա խոսքով՝ սա կանխելու համար Հայաստանը պետք է ընդունի Ադրբեջանի բոլոր պայմաններն այդ թվում՝ «Արևմտյան Ադրբեջանի համայնքի վերադարձի ապահովումը»:

04.11.2025

Դերենիկ Մարգարյան. խոսք հիշատակի

Սահը վրա է հասել 2025 թ. նոյեմբերի 7-ին...

Ծնվել է պատերազմական 1944 թ. հունիսի 7-ին Կապանի շրջանի Շիշկերտ գյուղում, ուր այդ ժամանակ բնակվում էր մայրը:

Հաճախել է Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

Դպրոցական տարիներին նրա համար ընդօրինակման կերպար էին մարզիկները, ռազմական գործիչները: Եվ երազանքների երազանքն օդաչու դառնալն էր: Ու միջնակարգն ավարտելուց հետո քննություններ հանձնեց Կիևի ավիացիոն ինստիտուտում սովորելու համար: Հաջողությամբ հանձնեց քննությունները, բայց ծնողները թույլ չտվեցին սովորել այդ բուհում, ուստի և ընդունվեց Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը:

Սովորելուն զուգահեռ աշխատել է Երևան քաղաքի բարեկարգման գրասենյակում՝ եռակցող:

Պոլիտեխնիկական ինստիտուտի ռադիոտեխնիկայի և հեռուստատեխնիկայի ֆակուլտետն ավարտելուց հետո վերադարձել է Կապան: Աշխատանքի է ընդունվել Կապանի կապի հանգույցում՝ գծային ինժեներ, և երիտասարդ մասնագետի իր իմացությունն օգտագործել ի նպաստ Կապանի շրջանի կապի զարգացման:

Այնուհետև նշանակվել է Կապի հանգույցի տնօրենի տեղակալ՝ էլեկտրակապի գծով:

Այդ ժամանակ շրջանում միայն Կապան քաղաքն ուներ երկու հազար համարանոց ավտոմատ կայան, մնացած բնակավայրերի հետ կապն իրականացվում էր կենտրոնական հեռախոսակայանի միջոցով՝ ոչ ավտոմատ եղանակով:

Ընդհանուր առմամբ Դերենիկ Մարգարյանը մեծ ներդրում ունեցավ Կապանում կապի ավտոմատացման գործում՝ ղեկավարությամբ Ռոմա Դավթյանի:

Կապի հանգույցում նրա վերջին պաշտոնը գլխավոր ինժեներն էր:

1981-ի սկզբին Դերենիկ Մարգարյանի կենսագրության մեջ շրջադարձ տեղի ունեցավ: Կապանում ընթանում էին տրիկոտաժի ֆաբրիկայի շինաշխատանքները: Այդ ժամանակ էլ նրան նշանակում են կառուցվող ֆաբրիկայի տնօրեն: Շահագործումից յոթ ամիս անց Կապանի ֆաբրիկան առանձնացվում և դառնում է ինքնուրույն ձեռնարկություն՝ մեծ համբավ ձեռք բերելով ամբողջ հանրապետությունում և ոչ միայն:

Նրա գլխավորությամբ տրիկոտաժի ֆաբրիկան ոչ միայն արտադրական բարձր ցուցանիշներ է արձանագրում, այլև մասնաճյուղեր բացում շրջանի մի շարք բնակավայրերում՝ այդկերպ նպաստելով տարածաշրջանի գյուղապահպանման մեծ գործին:

Դերենիկ Մարգարյանի կյանքի և գործունեության ուշագրավ հատվածներից է նրա մասնակցությունը հայոց Արցախի համար ծավալված ազգային–ազատագրական պայքարին:

1988-ից առաջ էր «Գարուն» ամսագրում ծանոթացել Վազգեն Սարգսյանի հետ, ում հետ բարեկամությունը շարունակվեց մինչև Սպարապետի ողբերգական վախճանը:

Արցախյան պատերազմի ժամանակ Կապանի ինքնապաշտպանական խորհրդի անդամն էր, տրիկոտաժի ֆաբրիկայի աշխատողներից կազմակերպել էր ինքնապաշտպանական ջոկատ, որը տևական ժամանակ մարտական հերթապահություն էր իրականացնում Ներքին Հանդի մատույցներում:

Իսկ երբ 1993-ին ստեղծվեց Սյունիքի հարցերով ՀՀ պետնախարարի ինտիտուտը՝ Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ, նա դարձավ պետնախարարի խորհրդական տնտեսական հարցերով:

1995 թվականին Դերենիկ Մարգարյանն ընտրվեց ՀՀ առաջին գումարման Ազգային ժողովի պատգամավոր, մինչ այդ էլ քանիցս ընտրվել էր Կապանի քաղաքային խորհրդի պատգամավոր:

1998-99 թթ. ՀՀ կապի և տրանսպորտի փոխնախարարն էր:

1999 թ. հոկտեմբերի 27-ի ողբերգությունից հետո կամովին հրաժարվեց փոխնախարարի պաշտոնից:

Այնուհետև՝ երկու տարի, «Արմենտել» ՓԲ ընկերության շինվարչության պետն էր, որից հետո ստեղծեց մասնավոր ընկերություն և զբաղվեց շինարարությամբ:

Դերենիկ Մարգարյանը հայտնի էր իր մեծաթիվ բարեգործություններով: Միայն խորհրդային տարիներին հարյուրից ավելի կապանցիներ նրա հովանավորությամբ ուսում են ստացել ԽՍՀՄ տարբեր բուհերում: Կրթություն ստանալու համար բազմաթիվ պատանիներ ու աղջիկներ է գործուղել Գերմանիա, Անգլիա, Չինաստան:

Իր կյանքի նշանավոր դրվագներից էր համարում մասնակցությունը Կապանում Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին կառուցելու աստվածահաճո գործին:

Համառոտ անդրադարձ կատարելով Դերենիկ Մարգարյանի անցած ուղուն՝ միանշանակ կարող ենք փաստել՝ նա իր ամբողջ գիտակցական կյանքը նվիրել է բնօրրան Կապանին՝ այդկերպ հավերժորեն իր տեղը գտնելով Կապանի նորագույն շրջանի պատմության մեջ: //

Ժորա Հովսեփյան. խոսք հիշատակի

77 տարեկանում վախճանվել է Ժորա Վարոսի Հովսեփյանը:

Մասնագիտությամբ պատմաբան էր, ավարտել էր Երևանի պետհամալսարանի պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության բաժինը, զբաղվել մանկավարժական գործունեությամբ:

Նախ աշխատել է Կապանի երկրագիտական թանգարանում, դասավանդել է Կապանի շինարարական տեխնիկումում, եղել վարչատնտեսական աշխատանքների գծով փոխտնօրեն, մեթոդիստ, հեռակա և ցերեկային բաժինների վարիչ, ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն:

Ժորա Հովսեփյանի ապրած տարիների մի մասն անցել է լրատվության ոլորտում. խմբագրել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի «Քաջարան» բազմատպաբանակ և «Հզոր Սյունիք» հասարակական–քաղաքական թերթերը:

1992-ին ընտրվել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի արհկոմի նախագահ և պաշտոնավարել մինչև 1996 թվականը:

Այդ տարում ընտրվել է Քաջարանի քաղաքապետ, վերընտրվել 1999-ին՝ աշխատելով մինչև 2002 թվականը:

Ժորա Հովսեփյանը մշտապես ապրել է քաջարանցիների հոգսերով, և հայրենի եզերքի հանդեպ նրա սերն ու նվիրվածությունը սահմաններ չէին ճանաչում: Նրա խառնվածքին բնորոշ էր նաև հասարակական աշխատանքը, եղել է ժողովրդական պատգամավորների Կապանի շրջխորհրդի պատգամավոր, շրջխորհրդի սոցիալական և առողջապահության հանձնաժողովի նախագահ ու շրջխորհրդի նախագահության անդամ: //

Կյանքից հեռացել է Կարեն Նուրիջանյանը



Ծնվել է 1937 թ. սեպտեմբերի 1-ին Կապանի շրջանի Վաչագան գյուղում:

1955 թ. ավարտել է Կապանի թիվ 3 ռուսական միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկական ֆակուլտետի երեկոյան բաժին: Միաժամանակ՝ նույն թվին, ընդունվել է աշխատանքի Երևանի Օստրովսկու անվան մեխանիկական գործարանում՝ փականագործ:

1957-1962 թթ. աշխատել է Երևանի լուսատեխնիկական գործարանում՝ փականագործ, այնուհետև՝ ինժեներ-կոնստրուկտոր:

1962-1965 թթ. նշանակվել է Կապանի պղնձահանքային կոմբինատի էլեկտրամեխանիկական արտադրամասի ավագ մեխանիկ-տեխնոլոգ:

1965-1973 թթ. նշանակվել է «Հայէլեկտրալույս» արտադրական միավորման Կապանի նորաստեղծ մասնաճյուղի գլխավոր ինժեներ:

1973-1993 թթ. նշանակվել է Կապանի նորակառույց «Էլեկտրոն» գործարանի տնօրեն, որտեղ աշխատել է շուրջ 800 մարդ, որից 120-ը՝ ճարտարագետ: Գործարանը հատուկ նշանակության ռադիոէլեկտրոնային արտադրանք էր թողարկում, որը արտահանվում էր նաև հանրապետությունից դուրս:

Ձեռնարկության միջոցներով կառուցվել են նաև բնակելի շենքեր, «Էլեկտրոն» ճամբարը, կամուրջ և այլն:

1993-1997 թթ. աշխատել է Կապանի քաղաքային խորհրդի գործկոմում նախագահի խորհրդական:

1997-2000 թթ. աշխատել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ում:

2000-2014 թթ. եղել է «Բանիս» ՍՊԸ գործադիր տնօրեն:

Կարեն Նուրիջանյանը նվիրական, անթերի, բարեխիղճ աշխատանքի համար պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով, «Պատվո նշան» շքանշանով, ստացել պատվոգրեր և արժանացել այլ խրախուսանքների: Նա լավի ու բարու թարգմանն էր, ջատագովն ու սերմնացանը, ով սկսնակ մասնագետին ոգևորելու յուրահատկությամբ ու համառությամբ օժտված ղեկավարներից էր, ով բոլոր ցավոտ դեպքերի նժարողն ու մեկնաբանն էր և բարի քննադատը, արդար էր ու արդարության պաշտպան:

Երեք անգամ անընդմեջ ընտրվել է Կապանի քաղխորհրդի պատգամավոր:

Եղել է ՀԿԿ Կապանի շրջանային կոմիտեի անդամ:

Արժանապատիվ սյունեցու անունը կմնա սերունդների հիշողության մեջ: //

Խոսք հրաժեշտի. Էդիկ Հակոբյան



Ծննդյան 90-րդ տարեդարձի օրը՝ նոյեմբերի 5-ին, երկրային կյանքին հրաժեշտ տվեց պատմության ճանաչված մասնագետ և մտավորական Էդիկ Հակոբյանը: Ավարտել է Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոցը: Նախ միջին-մասնագիտական կրթություն է ստացել, այնուհետև 1962-68 թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

Նրա աշխատանքային գործունեությունն անցել է մանկավարժության ոլորտում, նախ՝ թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ պատմության և հասարակագիտության ուսուցիչ, ապա՝ 1970-1991 թթ., աշխատել է թիվ 10 դպրոցում՝ հիմնադիր տնօրեն, այնուհետև դասավանդել է թիվ 3 միջնակարգ դպրոցում, Կապանի արվեստի պետական քոլեջում՝ պատմության և տնտեսագիտական առարկաների դասախոս:

Տարիներ ի վեր Էդիկ Հակոբյանը մանկավարժական փորձն ու մասնագիտական գիտելիքները փոխանցել է մատաղ սերնդին, սկսնակ մանկավարժներին, ձևավորել նրանց աշխարհայացքը, ընդլայնել մտահորիզոնը:

Շրջապատում վստահություն և հարգանք վայելող անձնավորություն էր:

Պարգևատրվել է պատվոգրերով, հուշամեդալներով, վարում էր հասարակական-քաղաքական ակտիվ գործունեություն:

Ամուսնացած էր, ունի երեք զավակ: //

ՀՈՂՀԱՏԸ

«Շեն քաղաք ես, Գորիս»:

«...Թե ինչ մարդիկ էին Գորիսի բնակիչները, և այդ ոչ այն իմաստով, թե ինչպես էր նրանց արտաքինը, որովհետև աշխարհի բոլոր անկյուններում էլ կան հաստ ու նիհար մարդիկ, մարդիկ, որոնք հոգնում են քնելուց և որոնք իրենց կյանքում մի անգամ կուշտ քնելու կարոտ են»:

ԱԿ. ԲԱԿՈՒՆՑ, «ԾԻՐԱՆԻ ՓՈՂԸ», ԸՆՏՐԱՆԻ, «ՉԱՆԳԱԿ-97» 2003Թ., ԷՋ 249,252

Հարմանալի քաղաք է մեր Գորիսը: Հիմա, երբ սկսում եմ գրել այս մասին, ինչ պետք է ներկայացնեմ, աչքիս առջև մեկ-մեկ գալիս անցնում են հանճարեղ Ակսել Բակունցի Աթա ապերը, Մինա բիբին, Գարադաբուղդի Մուխանը, Ցուլ Օհանը, Ավին, Պարան-պարան Ավանեսը, Սերոյի Ճել Ավանը և բազմաթիվ այն երևելի հերոսները, ովքեր, իրապես, տարբեր ժամանակներում համ ու հոտ են հաղորդել մեր չնաշխարհիկ քաղաքի հասարակական նկարագրին: Չեմ ասում, թե այլ քաղաքներում նման տրամադրությունների պակաս կա, բայց Գորիսյանը, իսկապես, առանձնահատուկ է՝ իր բուրմունքով և չքնաղ պատկերներով:

Վերջին օրերին թերթելով սոցիալական ցանցի իմ ֆեյսբուքյան էջը, աչքովս ընկավ Գորիսեցու մի համով գրառում՝ նշել էր վերջին շրջանի Գորիսի հայտնի մականունավորների մի շարք և խնդրել լրացնել այն: Ավելացնողներ, իհարկե, եղան: Ակամայից հիշեցի տարիներ առաջ մեր ավագ գործընկերներից մեկի հայտնած ցանկությունը՝ այդ շարքի մարդկանց նկարելու, ձայնագրելու նրանց հետ կապված հնչեղ պատմությունները՝ գրին հանձնելու համար: Շնորհալի լրագրողի այդ հայրենանվեր ծրագիրը, ցավոք, չիրականացավ՝ նրան կուլ տվեց ավելի զորեղը՝ մանրածախ առևտուրը: Հա՛, հա՛, ուղղակի այդպես եղավ:

Հիմա մեր կոլորիտային քաղաքի առօրյա կյանքին համուհոտ հաղորդած և այժմ էլ՝ Աստծո ամեն օր հարստացող նյութը սպասում է իր բարեխիղճ հավաքողին ու շարադրողին:

Ցանկությունս է մեր քաղաքային կյանքի գունապնակից մի գույն առանձնացնել, ով եկել ու հարստացնում է գորիսյան իրականությունը և կարևոր նպաստ բերում մեր հասարակությանը: Պատմվածքիս նյութն էլ հենց սա է լինելու:

* * *

Հաստ ոտք ու ձեռք, ժայռեղեն թիկունք, ափերի կոշտուկների բարձրությունը տեղ-տեղ երկու սանտիմետրի է հասնում: Պարթև հասակ ունի՝ մոտ 1 մ 90 սմ, ուղիղ և նկատելի հպարտ կեցվածք, խաղաղ հայացք: Այդ հպարտության միջով ձգվում է թախծի և տրտմության մի նու՜րբ երանգ, որն առանձնահատուկ տեսք է տալիս նրա դեմքին: Արդյո՞ք դա տեսածի, ապրածի-արածի բազմամյա հոգսառատ կուտակումների պատկերը չէ, որ մշտապես եռում է նրա ներսում: Դե մի ձևով պետք է դուրս գա չէ՞, այլապես կխեղդի նրան: Ստորին ատամնաշարին՝ կզակի կենտրոնի դիրքում, ոսկեգույն շապիկաշարք ունի, որը կարելի է ամրապինդ ծնոտի առանձնահատուկ զարդը համարել, որովհետև բերանը բացելիս առաջինը դրանք են շողում: Խոսում է թեթևակի տնքոցով, բառերը խաշիլի եռացող կաթսայից լսվող բլթոցի նման է դուրս գալիս՝ մեկ հազիվ լսելի, մեկ էլ ցայտում է աջ ու ձախ, ապա պահի տակ կտրվում է եռքը ու հայացքը գամվում մի կետի և մնում անշարժ՝ արձանացածի տեսքով: Մոտ 63 տարի առաջ է լույս աշխարհ եկել՝ գյուղական բազմանդամ հարկի տակ, այս մարտին կանցնի տարիքային կենսաթոշակի: Երեք եղբոր միջնեկն է, ծննդավայրը՝ Իշխանասարի Սև լճի արևելյան լանջից կախ, գեղատեսիլ հովտին փարված Վաղատուր գյուղը: Ինքն էլ մյուսների նման զմայլվել է լեռնահովտի հարուստ բնաշխարհով, խաղացել գյուղամիջով վազող գետակի ջրերում, խմել զուլալ աղբյուրների և շատրվանող հորդառատ հանքային ջրի (թթու ջրի) կենարար հեղուկը:

– Մինչև հիմա չեմ իմանում, թե ինչի վաղ տարիքում հայտնվեցի Գորիսում՝ մեր ընտանիքի հետ հեռու բարեկամություն ունեցող մի բարի մարդու հարկի տակ, և մնացի, մինչև հիմա էլ այստեղ եմ: Գուցե դրանում դեր է ունեցել այն, որ գյուղում մենք պահում էինք այդ մարդու ոչխարները, - ասում է ու մեղավոր ժպտում: -Այստեղից էլ հաճախել եմ Գորիսի թիվ 2 միջնակարգ դպրոցը, որտեղ սովորել եմ մինչև 8-րդ դասարան, ապա թողել ուսումս: Սկսել եմ աշխատել: Կատարել եմ ֆիզիկական ուժ պահանջող ամենատարբեր գործեր, հետո մեկնել եմ ծառայության՝ խորհրդային բանակ: Ծառայությունս ավիացիոն զորամասում էր՝ Մերձբալթիկայի Ռիգա քաղաքում: Հաջող է անցել բանակային կյանքս, այն աստիճան, որ հրամանատարս առաջարկել է զորացրվելուց հետո վերադառնալ զորամաս և քաղաքացիական հաստիքով աշխատել իրենց հետ: Ու ֆինանսավորել է ինձ՝ հարազատներիս տեսնել գնալու և Ռիգա հետ վերադառնալու համար: Այդպես էլ արել եմ: Մի քանի օր գյուղում մնալուց հետո վերադարձել եմ և աշխատանքի անցել մեր զորամասում: Ամեն ինչ ընթանում էր իմ ուզածով, լավ էլ վաստակում էի, միայն մի բան էր շատ վատ՝ հայրենիքի կարոտը խեղդում էր ինձ: Երեք տարի Մերձբալթիկայում մնալուց հետո վերադարձա Գորիս՝ հետս բերելով այն ժամանակի համար մի կլորիկ գումար: Տասը հազար ռուբլի ավանդ դրեցի բանկում, որն այդպես էլ կորավ, գնաց: Մոռացա ասել՝ վարորդական իրավունք էի ստացել, ավտոմեքենա վարել գիտեի: Գորիսի քաղաքապետարանի հետ պայմանագիր ստորագրեցի՝ քաղաքի կոմունալ ծառայությունում անցա աշխատանքի՝ որպես աղբահանության ավտոմեքենայի վարորդ: Աշխատեցի երեք տարի, գուցե մի քիչ էլ ավելի, և ստացա պայմանագրով նախատեսված բնակարանը, որտեղ հիմա էլ ընտանիքիս հետ ապրում ենք: Դրանից հետո կատարել եմ ամենատարբեր աշխատանքներ, որ կարողանամ պահել ընտանիքս:

– Շատ չերկարե՞ց, – հարցրի նրան, – վերջապես ե՞րբ և ինչպե՞ս սկսեցիր կատարել այժմյան աշխատանքդ, ո՞վ քեզ մղեց դրան, թե՞ ինքդ որոշեցիր:

Ընդհատեց իր խոսքը, և լռության մեջ դեմքին գծագրվեց մի պատկեր, որն ասում էր, թե այս մարդն էքսկուրս է անում դեպի անցած ժամանակներ և փորփրում իր հիշողությունների պարկը: Երևի մեկ րոպեից ավելի տևեց այդ դադարը, ապա հարմարեցնելով նստելու դիրքը՝ ցածրաձայն շարունակեց.

– 1992 թվականից այս գործին եմ, արդեն 31 տարի է: Առաջին անգամ հատել եմ Գորիսում հայտնի Ջիջու Հայկի բարեկամի գերեզմանափոսը: Պատկերացում չունեի, թե ինչպես պետք է անեի: Դրսի չափերը նշեցին ու գնացին: Երբ եկան նայեցին, ըստ իս՝ աշխատանքը վերջացրել էի, ասացին, որ արել եմ գործի կեսը՝ հարկավոր էր խորացնել: Այդ օրվանից ինձ համար պարզ դարձավ ամեն բան և մինչև հիմա էլ աշխատանքը կատարում եմ այդ պահանջներով: Մենակ եմ աշխատում, շատերին եմ առաջարկել միանալ ինձ, չեն գալիս: Մեկ-երկու հոգի եկել, փորձել են, բայց չեն հարմարվել՝ անմիջապես թողել ու գնացել են: Չեմ երկարացնում. նրանցից մեկն արդեն հատած փոսում իրեն նույնիսկ շատ վատ է զգացել, մի կերպ հեռացրել եմ այդտեղից, գիտակցության բերել ու ճանապարհել տուն: Այնպես չէ, որ ինձ համար ամեն ինչ հարթ է ընթացել, ես էլ ծանր օրեր եմ ապրել, տևական ժամանակ լարված եմ եղել, բայց ժամանակի ընթացքում հարմարվել եմ, հիմա խնդիրներ չկան՝ աշխատանք է, անում եմ: Մի տեսակ հանգստություն եմ զգում, որ ծառայում եմ ամբողջ Գորիսին, մեկ-մեկ էլ գյուղեր եմ գնում՝ Վերիշեն, Հարթաշեն, Քարաշեն: Ճիշտ է, աշխատանքս վարձատրում են, բայց փորձում եմ, որ դրա չափն ընդունելի լինի դիմացինի համար, չէ՞ որ նա դժբախտության մեջ է, ժամանակները դժվարին և ծանր են, մարդկանց միջոցները՝ չափազանց սուղ: Երբեք գին չեմ սակարկում, գործն ավարտելուց հետո էլ ոչինչ չեմ ասում, իրենք են մոտենում ինձ և ընդհանուրի կողմից ընդունված չափով վճարում անում:

Հարցնում եմ՝ արդյո՞ք լինում է գնային շեղում: Պատասխանում է.

– Իհարկե: Դեպքեր են լինում՝ գործն ավարտելուց հետո մոտենում և ասում են, որ տեղները շատ է նեղ, կարող են միայն գումարի կեսը տալ, կամ հիմա չունի՝ հետո կտա: Հետոն էլ դառնում է 2-3 լ տնական քաշած օղի, որը ես չեմ էլ խմում և այլն: Իմ պատասխանը նման դեպքերում այս է լինում, ջանդ սաղ լինի, սա էլ թող այսպես լուծվի: Կարող եք հարցնել մեր համաքաղաքացիներից՝ չեմ թողնի, որ մեկը դժգոհ մնա ինձանից: Չէ՞ որ լինում է նաև այսպես, ինչ թաքցնելու բան է, որոշ մարդիկ էլ ավելին են տալիս, քան ընդունված չափն է: Իհարկե, նման դեպքերը եզակի են, բայց լինում է այնպես, որ դժգոհելու բան չունեմ, իմ աշխատանքով կարողանում եմ հոգալ ընտանիքիս կարիքները: Հատուկենտ դեպքերում հանգուցյալի բարեկամներն են հատումն անում, բայց, մեծ հաշվով, մեր քաղաքում այդ գործը ես եմ կատարում: Օր է լինում՝ երկու, երեք, նույնիսկ մի անգամ չորսի համար տեղ եմ հատել: Նման դեպքերում հուղարկավորություններն անում են նախօրոք պայմանավորվելով՝ մեկական ժամ տարբերությամբ, որպեսզի իրար չխանգարեն, ես էլ հասցնեմ: Ճիշտն ասած, արդեն զգում եմ, որ հոգնում եմ՝ հատկապես նման լարված օրերին: Դե, մեր ժողովուրդն էլ երբեմն այնպիսի վերաբերմունք է ցույց տալիս, որ մնում ես զարմացած՝ մեկը չի ուզում բահ վերցնի, գերեզմանը ծածկելուն օգնի: Բայց տես, հոգեհացի սեղանին ինչ ակտիվ են: Այս բանը ես չեմ ընդունում: Ինչի՞ չեն սահմանափակում, օրենք ընդունում, որ հուղարկավորությանը 50 մարդուց ավելի մասնակից չլինի: Հոգեհանգստին եկել, ցավակցել ես, գնա ձեր տուն, էլ ինչի ես հաջորդ օրը գալիս, անգամ ինքնահողին, յոթին. ինչ է՝ բան ու գործ չունե՞ն, ժամանակ են անցկացնում, թե մեկ այլ բան:

– Նկատի ունես սեղան նստե՞լը:

– Հա, բա ինչ, ուտել-խմելու տե՞ղ են ճարել, ամոթ է: Մարդը, դժբախտության մեջ հայտնվելով, վազում է դեպի բանկեր և վարկ վերցնում, որ սեղան գցի այդպիսիների համար: Մեր ժողովրդի մի մեծ հատված հենց այդ պատճառով վարկի տակ տնքում է: Պետք է պետությունը կարգավորի այդ հարցը, ժողովուրդն էլ՝ իր հերթին:

– Կասե՞ս, երբ դարձար մեր քաղաքի համար հայտնի Երջո:

Ծիծաղում է և շարունակում:

– Էն գլխից էլ Երջո էի, ավելի ճիշտ Երջանիկ Ալեքսանյան, դե Գորիսում ընդունված բան է մարդկանց անունը կրճատելը, մի տեսակ փոթ անվան (մականվան) նման է հնչում, բայց իմ անունն է՝ Երջանիկ-Երջո, Հայկ-Հայկո, Վարազդատ-Վարո, կարելի է հա՛ շարունակել:

Դե իսկ հայտնի դառնալը կապված է այս աշխատանքի հետ: Այդ հարցով ինձ ամեն օր դիմողներ են լինում, ամբողջ քաղաքի հետ շփվում եմ, գործ ունենում, ոնց հայտնի չդառնայի: Մի բան էլ կա՝ իմ հարաբերությունը Գորիսի ժողովրդի հետ: Ասել եմ, չկա մի մարդ, ում մերժած լինեմ կամ կոշտ պատասխանած, կամ էլ՝ մեկ այլ բան: Գուցե սա էլ է օգնում իմ հայտնի դառնալուն: Արել եմ այս գործը և շարունակելու եմ այնքան ժամանակ, ինչքան ուժերս ներեն: Անկեղծ, կուզեի ուրիշ անողներ էլ լինեն, բայց չկան, չեն ուզում, - ասում է Երջոն և կոշտացած հզոր ափերը պարզում առաջ:

– Երջո, քեզանից առաջ երկու հոգի ևս գերեզման հատելու աշխատանք են արել, իհարկե ոչ այն ծավալով, ինչ դու ես արել ու անում, մեկը Գորիսում հայտնի Նուբարի Վալոդն էր, մյուսն էլ Սետին:

– Հմ, հմ, ես ճանաչել եմ նրանց, բայց միասին չենք աշխատել:

– Գիտե՞ս, թե Վալոդն ու Սետին ինչպես էին դիափոսի չափերը որոշում:

– Չէ, տեղյակ չեմ:

– Ուրեմն, այսպես. Վալոդը բարձրահասակ էր, իսկ Սետին շատ կարճահասակ: Մետր, սանտիմետր նրանց համար անհասանելի բաներ էին: Պատմում են, որ Վալոդը պառկում էր գետնին Սետին նրա ոտքերի գլխի և կողերի հատվածներում բլունգով նշաններ էր անում և սկսում էին քանդել: Խորությունն էլ այսպես էին որոշում. եթե տղամարդ էր հանգուցյալը՝ Սետու գլուխը փոսից պիտի կիսով չափ երևար, եթե կին էր՝ գլխի գագաթին հավասար, այսինքն՝ կնոջ համար մի քիչ խոր պետք է փորեին: Ասում են՝ իբրև դարերով այդպես էր ընդունված:

Ուշադիր լսելուց հետո՝ միանգամայն լուրջ, Երջոն թե՝ «Չէ, ես գործիքներիս հետ նաև մետր ունեմ՝ չափում եմ, կին լինի, թե տղամարդ նույն չափերով եմ անում, ինձ հայտնի չէ նման բան»:

Հարցրի՝ իրականությունը, որի մեջ է ամեն օր ինքը, արդյո՞ք, հոգեբանորեն կարողանո՞ւմ է տանել, ծանր չէ՞:

– Իհարկե ծանր է, հատկապես վերջին տարիների մահերը շատ-շատ են, մահացածների տարիքն էլ գնալով ավելի է երիտասարդանում: Ինչ վերաբերում է պատերազմի ժամանակ կամ սահմանին ունեցած զոհերին, ապա դրանք անտանելի էին: Չեմ կարծում, որ կարող է լինել մեկը, ով անտարբեր անցնի տեսնելուց, թե ինչպես են հուղարկավորում մեր 18-20 տարեկան զինվորներին, բանակի մյուս զոհերին: Դա անտանելի է: 2020 թ. քառասունչորսօրյա պատերազմի զոհերի համար Գորիսի ազատամարտիկների պանթեոնում 43 գերեզման եմ հատել, լիովին անվճար և ընդհանրապես, երբ հանուն հայրենիքի զոհվածների համար գերեզման եմ փորում, ոչ մի գումար չեմ վերցնում, դա իմ ծառայությունն է ժողովրդին ու երկրին՝ կարող եք հարցնել մեր քաղաքացիներին, բոլորը կհաստատեն ասածս: Ո՞նց կարող է մարդ ուտի-վայելի մեր սուրբ նահատակների արյան գումարը, չէ, դա անելու բան չէ: Ասեմ նաև՝ 43 զինվոր տղաների հուղարկավորությունից հետո ծանր ապրումներ եմ ունեցել, ավելի քան մեկ ամիս այնպիսի սթրեսների մեջ եմ եղել, որ անգամ բժշկական օգնություն, միջամտություն են արել ինձ, չէի կարողանում քնել, ուտել, աշխատել: Մարդ, եթե քարից էլ լինի, այն ինչ մենք ենք տեսել, չի կարող չազդվել: Ասացի՝ մահերը ընդհանուր առմամբ շատացել է: Գիտե՞ք, 2023թ. հունվարին մեր Գորիսում 100 թաղում է արվել, այսպես ու՞ր կհասնենք, մեր փոքր քաղաքի համար սա շատ մեծ թիվ է: Ասում եք՝ տարեկան քանի տեղ եմ հատում, իհարկե, չեմ հաշվում, բայց շատ է, լարված եմ աշխատում, կարող է 300-ի հասնի: Դե պատկերացրեք՝ 1992 թվականից սկսած... չէ, ավելի լավ է այդ մասին լռենք, չխոսենք, այլապես...

– Իսկապես, ծանր է այդ մասին խոսելը, չնայած նաև այն ամենն է ծանր, ինչի շուրջ հիմա արտահայտվում ենք: Այնուհանդերձ, քաղաքապետարանի, հարկային մարմինների հետ ի՞նչ առնչություն ունես, - հարցնում եմ հողհատին:

– Հարկայինի հետ ոչ մի շփում չի եղել՝ ոչ իրենց, ոչ էլ իմ կողմից: Քաղաքապետարանի հետ այնքանով, որ, երբ մարդու դուռը դժբախտությունը ծեծում է, նա էլ քաղաքապետարանի դուռն է ծեծում: Պատասխանում են՝ «Գնա Երջոյի մոտ՝ ինքը կասի»: Փաստորեն՝ չնայած ես պաշտոնատար մարդ չեմ, բայց բոլոր հարցերը ես եմ կարգավորում:

Շարունակությունը՝ էջ 12

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆ. ՀԱՅԱՑՔ ԱՆՑՅԱԼԻՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԻՆ

Կոմիտաս Վարդապետը և ռուսական մշակույթը

Սկիզբը՝ N17-ում

1905 թ. Խրիմյան Հայրիկին (1820-1907) Թիֆլիսից Ալեքսանդրապոլ մեկնող գնացքով ուղեկցում էր Կոմիտաս Վարդապետը: Ճամփորդության ընթացքում խոսելով տարբեր ազգերի երաժշտարվեստի մասին՝ Վարդապետը բավական մանրամասն անդրադարձել է ժողովրդական երգերին: Նա առանձնացրել է ռուսական ազգային երգերի լայնահուն՝ հարթավայրի պես անծայրածիր բնույթն ու լադային ինքնատիպությունը: Ի հավաստումն իր ասածի՝ հայոց կաթողիկոսի համար Վարդապետը կատարում է ռուսական երգեր:

Կոմիտասի «Լեռնային բարձունքներ» ռոմանսը գրված է Մ. Լերմոնտովի խոսքերով (թարգմանված է Գյոթեի բանաստեղծությունից): Նրա գրչին է պատկանում նաև Պ. Չայկովսկու (1840-1893) «Был у Христа-младенца сад» երգի խմբերգային տարբերակը:

1912-ին Պոլսից Տիրայր վարդապետին հղած նամակում Մաղաքիա Օրմանյանն անդրադառնում է Վարդապետի թարգմանած ռուսերեն երգերին, հավանաբար նկատի ունենալով վերը նշված ստեղծագործությունները: Օրմանյանը գրում է. «Կոմիտաս Վարդապետը թարգմանեց ծրարյալ ռուսերեն երգերը, որ շատ հեռու կտանի հյուսիսային աշխարհայացողությունը»:

Փարիզում, որտեղ 20-րդ դարի սկզբին շատ բարձր էր գնահատվում ռուսական երաժշտական մշակույթը, Վարդապետն առավել բազմակողմանիորեն է ընկալում ժողովրդական հարուստ ակունքներից բխած ռուսական երաժշտարվեստը: Ինչպես ճշմարտացիորեն նշում է Կոմիտասի սան Աղավնի Մեսրոպյանը. «Կոմիտասի նախասիրությունը եղավ ռուսական ժողովրդական երգի զարմանալի պոլիֆոնիզմը: Անոր պարզ ու հստակ հնչականությունը գրավեց իր հոգին, խորապես հուզեց իր մեծ տաղանդը»: Ա. Մեսրոպյանն իր «Կոմիտաս և ռուսական երաժշտությունը» ակնարկում անդրադառնալով Կոմիտասի՝ ռուս երաժշտությանն ունեցած վերաբերմունքին, գրում է. «Հայկական ժողովրդական երգերեն դուրս՝ Կոմիտասի ամենասիրած եղանակները մնացին Գլինկայի «Ռուսլան և Լյուդմիլա»-ի արիաները, Մուսորգսկիի «Երգ լվի մասին», Ռիմսկի-Կորսակովի «Շեհերազադը» և Դարգոմիժսկիի «Ռուսալկա» օպերան: Կոմիտաս բացառիկ սեր մը ուներ վերջինիս «Ջաղացպանի երգ»-ի նկատմամբ: Ունկնդիրներու հիշողության մեջ երբեք չեն կրնար մոռցվիլ այն պահերը, երբ Կոմիտաս մտերմական հավաքույթներու ժամանակ հաճախ կանցներ դաշնամուրի առաջ և անոր մեղեդիներուն միացնելով իր քաղցրալուր ձայնի ելևէջները, խորունկ վերապրումով կդրսևորեր ռուս աշխատավոր ջրաղաց պանի ներքնաշխարհը»: Կոմիտաս Վարդապետն իր գրադարանում հատուկ խնամքով առանձնացնում և ուսումնասիրում էր ռուս դասականներ Մոդեստ Մուսորգսկու, Ալեքսանդր Բորոդինի և Ն. Ռիմսկի-Կորսակովի գործերը, իսկ իր «Նվիրական պահարանում» Խրիմյան Հայրիկի, Խ. Աբովյանի, Կ. Դեբյուսիի նկարների կողքին պահում էր Մ. Գլինկայի, Պ. Չայկովսկու և Մ. Գնեսինի նկարները31, հավաքում և խնամքով պահպանում էր ռուս երաժշտության մասին մամուլում հրատարակված հոդվածները: 1913-ին Ռուսաստանից Պոլիս ժամանած երգչախումբը հանդես եկավ Ստեպան Սմոլենսկու (1848-1908) Պատարագի կատարումով. Վարդապետը շատ բարձր էր գնահատում այդ գործը՝ իր աշակերտներին հորդորելով ներկա գտնվել բոլոր համերգներին: «Կոմիտասը մեծ ոգևորություն կապրեր ամեն անգամ, - գրում է Ա. Մեսրոպյանը, - որ Ռուսաստանեն Պոլիս կայցելեին ռուսական երաժշտական կատարողական ուժեր: Անոնցմե ամեն մեկուն հետ Կոմիտաս կծանոթանար Պոլսո հայտնի երաժշտական «Կոմանտինկել» տան մեջ... Հաճախ, երբ այդ առիթով մենք կերթայինք ռուսական եկեղեցին, դասի մեջ կտեսնեինք Կոմիտասը կանգնած իր պատվավոր տեղը, որ վերացած վիճակի մեջ կմասնակցեր երգչախմբի երգեցողության»:

1909-ին հայ անվանի պետական գործիչ, գրականագետ Ալեքսանդր Մյասնիկյանը (1886-1925) նամակ է գրում Կոմիտաս Վարդապետին և հայ ուսանողական միության անունից խնդրում է գալ Մոսկվա, ուսանողներից մի երգեցիկ խումբ կազմել և համերգներ տալ այդ միության օգտին:

Վարդապետը պատճառաբանելով իր զբաղվածությունը՝ մերժում է Ա. Մյասնիկյանին: Նույն թվականին Էջմիածնից Մոսկվա՝ Մյասնիկյանին հղած Կոմիտասի նամակը Վարդապետի անձուկ վիճակի ևս մի վկայությունն է. «Ձեր ուզած և իմ ցանկացած համերգը պատուաւոր գլուխ բերելու համար անհրաժեշտ է առնուազն մէկ և կես ամիս՝ գալու, գնալու և պատրաստելու համար. իսկ այդքան երկար ժամանակ ինձ դժուար թե թողնեն բացակայեմ: Բայց և այնպէս, փորձեցէք՝ դիմեցէք պաշտօնապէս Վեհափառին, գուցէ թոյլատրում է, այն ժամանակ կը գամ. ես պատրաստ եմ ծառայելու»:

Այս սահմանափակումների պայմաններում ռուսական մեծ քաղաքներում դժվար էր ճանաչելի դարձնել Վարդապետի երաժշտական և գիտական ժառանգությունը:

Կոմիտաս Վարդապետի տեսական ուսումնասիրությունների բավական քիչ հատված են թարգմանվել օտար լեզուներով: Ռուսական լայն լսարանի համար անհայտ էր նաև Կոմիտասի գիտական ուսումնասիրությունների մեծ մասը: Նրա ժառանգության արժեքավոր հատվածն առաջին անգամ ռուսերեն թարգմանել և հրապարակել է ռուս երաժշտագիտության մեջ զգալի վաստակ ունեցող անվանի երաժշտագետ, քննադատ Վասիլի Կորգանովը (Բարսեղ Ղորղանյան, 1865-1934):

Անդրադառնալով Կոմիտասի բանահավաքչական աշխատանքների կարևորությանը՝ Թիֆլիսի ռուսալեզու պարբերականներում Կորգանովը հանդես է եկել նրա անձն ու գործը լուսաբանող տարաբնույթ հոդվածներով: 1900-ին Թիֆլիսի «Кавказский вестник» ամսագրում նա գերմաներենից ռուսերեն է թարգմանել և հրապարակել Վարդապետի «Հայկական եկեղեցական երաժշտություն» խորագրով հոդվածը: 1902-ին նույն ամսագրում Վ. Կորգանովը իր «Взгляд и нечто» հոդվածում մանրամասն դիտարկել է Վարդապետի «Հայ գեղջուկ պարը» խորագրով ուսումնասիրությունը»:

1904-ին իշխանուհի Մարիամ Թումանյանի խմբագրությամբ Թիֆլիսում հրատարակվող «Новое обозрение» ռուսերեն օրաթերթի «Կովկասյան երկաժշտությունը» խորագրով հոդվածում Վ. Կորգանովը գրում է. «Վերջապես, շատ տարիներ անցնելուց հետո, գտնվեց մի մարդ, որ զինված մասնագիտական կարողություններով, նվիրվեց կովկասյան երգերի ուսումնասիրությանը՝ արհամարհելով ամեն մի դժվարություն: Կոմիտասը հանդիսանում է հայկական երաժշտության առաջին ուսումնասիրողը... Նրան քաջալերողը ծառայած պիտի լիներ ոչ թե նրան, այլ գեղարվեստին և ամբողջ մարդկության»:

Երկու արվեստագետների՝ Կոմիտասի և Կորգանովի բարեկամության վկայությունն է 1904-ին անվանի երաժշտագետին հղած Վարդապետի նամակը՝ հետևյալ վերջաբանով. «Ուրախութեամբ սպասում եմ Ձեզ սեպտեմբերին, Յարգանքներով միշտ պատրաստ Ձեզ ծառայելու Ձեր անձնուէր, խոնարհ ծառայ Կոմիտաս Վարդապետ»:

Ժամանակի ընթացքում Վ. Կորգանովը դարձել է նաև Կոմիտասի առաջին քննադատներից: Իր «Կոմիտաս Կևորգյան» խորագրով հոդվածում անդրադառնալով Կոմիտասի փարիզյան ելույթներին և, մասնավորապես, «Հայ քնարի» հրատարակությանը՝ Վ. Կորգանովը գրել է. «Կոմիտաս Վարդապետը չպետք է հրատարակեր այդ ժողովածուն, որ երաժշտական ու գիտական տեսակետից ունի ավելի շատ բացասական, քան դրական նշանակություն»:

Չխորանալով կոմիտասյան մշակումների գեղարվեստականության մեջ՝ Կորգանովը նսեմացնում է դրանց արժանիքները: Երաժշտագետը պնդում է, որ ժողովրդական երգը, «հում նյութը» պետք է տպագրել այնպես, ինչպես երգում է ժողովուրդը: Ըստ նրա՝ մշակումը չի կարող վերարտադրել բնական երգի իսկական արտահայտչականությունը. «А настаивал и настаиваю на желательности издания народных напевов в подлинном, аутентичном виде»:

Կորգանովը գտնում էր, որ Կոմիտասի հետազոտությունները պիտի հրապարակվեն ռուսերեն և հայերեն, քանզի դրանք ավելի շատ հետաքրքրում են հայերին և ռուսներին, այլ ոչ թե ֆրանսիացիներին և գերմանացիներին:

1905-ին Կոմիտաս Վարդապետը Թիֆլիսի Հովնանյան դպրոցում կարդում է դասախոսություն հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտության մասին: Դրան հաջորդում է Թիֆլիսի Արտիստական ընկերության համերգը, որն իր աննախադեպ հաջողությամբ դառնում է մշակութային մեծ իրադարձություն: Թիֆլիսի հայալեզու և ռուսալեզու մամուլը հիացական կարծիքներ է հայտնում Կոմիտասի մասին՝ մասնավորապես, արվեստի ու հայ երաժշտության մասին՝ ընդհանրապես: Եվրոպական շրջագայություններից հետո՝ 1908-ին, Անդրկովկասի մյուս հայաշատ կենտրոնում՝ Բաքվի ժողովարանի դահլիճում, Վարդապետը հանդես է գալիս երկու նվագահանդեսով և ելույթ-դասախոսությամբ, որի մասին գրում է Պետերբուրգի «Русская музыкальная газета» շաբաթաթերթը: Հոդվածագիրը «Лекции по музыке в России» վերնագրով հոդվածում անդրադարձել է հայ եկեղեցական երաժշտության մասին Բաքվում կարդացած Կոմիտասի արժեքավոր դասախոսությանը: Նույն շաբաթաթերթում «Музыка в провинции» ընդհանուր խորագրի տակ՝ հրապարակվում է հաղորդագրություն ապրիլի 1-ին Կոմիտաս Վարդապետի Բաքվում կայանալիք համերգի վերաբերյալ:

Կոմիտասագիտության մեջ հսկայական ավանդ ունեցող երաժշտագետ, կոմպոզիտոր Ռոբերտ Աթայանը նամակագրական կապի մեջ է եղել Լազարյան ճեմարանի շրջանավարտ, ռուս արևելագետ, դիվանագետ Վլադիմիր Մինորսկու (1877-1966) հետ: 20-րդ դարի սկզբին Մինորսկին պաշտոնավարել է Իրանի և Թուրքիայի ռուսական դեսպանություններում: Ուսումնասիրել է Պարսկաստանի և Անդրկովկասի պատմաաշխարհագրությունն ու մշակույթը: Նա հայ դատը պաշտպանող ռուս այն դիվանագետն էր, որը հանդես էր գալիս հայանպաստ քաղաքական հայտարարություններով:

Շարունակելի

ՀՈՂԴԱՏԸ

Սկիզբը՝ էջ 11

Ցույց եմ տալիս տեղը, չափում եմ 4x5 մետրով երկու տարածք և անցնում իմ գործին: Չնայած հատկացվող մակերեսը փոքր չէ, բայց շինարարական աշխատանքների ժամանակ մեր քաղաքացիներն ավելի են մեծացնում, որը պետք է արգելվի, բայց ես ինչ կարող եմ անել: Թոզ կապի, Գորիս գյուղի գերեզմանատներում կան մեծ չափերով գերեզմաններ, որոնցում տասնամյակներ առաջ մեկ կամ երկու թաղում է արվել և ուրիշ ոչինչ՝ դրանց տերերը մեր երկրում էլ չեն: Ու այդպես մնում է տեղն ազատ, մյուս կողմից՝ նորանոր տարածքներ են հատկացվում գերեզմանի համար: Սա էլ անթույլատրելի է, բայց ինչպես ասացի, հոգեհացի, դրա մասին էլ մտածող չկա: Ստացվել է այնպես, որ գերեզմանոցների, առանձին գերեզմանների հարցերով ես եմ զբաղվում: Չեմ զլանում, ինձ շատ մարդիկ են դիմում, ուժերիս ներածին չափով օգնում եմ: Քիչ չեն նրանք՝ ովքեր տևական ժամանակ չեն այցելում ու կորցնում են իրենց գերեզմանի տեղը: Դա ավելի հաճախ վերաբերում է մեր երկրից դուրս ապրողներին: Տասնամյակներ հետո պատահական, թե նպատակային լինելով Գորիսում՝ փորձում են գնալ հարազատների շիրիմին, բայց տարիների ընթացքում այնքան փոփոխություններ են եղել, որ մարդիկ մոլորվում և չեն կարողանում գտնել գերեզմանը: Դիմում են ինձ: Իհարկե, առանց որևէ ակնկալիքի, ժամանակ եմ գտնում և օգնում նրանց: Ճիշտ է, որևէ հաշվառում չունեմ գերեզմանների, դրանց տերերի մասին, բայց երկար տարիների աշխատանքի արդյունքում ինձ հաջողվում է մեծ չափով տիրապետել այդ ամենին, և բանավոր հիշողությամբ ավելի քան 90 տոկոսով կլուծվեն այդ հարցերը: Դե հետո, որ ես չլինեմ, ինչպես կլուծվեն այդ հարցերը, չեմ կարող ասել: Փոքր թվով գորիսեցիներ էլ կան՝ արտերկրում ապրող, որոնք հեռվից փորձում են հոգ տանել իրենց ընտանիքի գերեզմանի մասին: Արդեն մի քանի տարի է՝ հինգ գորիսեցի պայմանավորվել են հետս՝ մաքրում եմ, հեռացնում ավելորդությունները, մի խոսքով՝ խնամքը կատարում: Յուրաքանչյուրը տարեվերջին մի փոքր գումար է ուղարկում, ես էլ բավարարվում եմ դրանով:

Հարցնում եք՝ ի՞նչ երազանք ունեմ: Երազանքս կապված էր որդուս հետ, ում կորցրեցի մի քանի տարի առաջ, նաև նրա նորածին երեխային: Ժառանգ էլ չմնաց նրանից: Ունեմ մի աղջիկ, ամուսնացրել եմ, դեռ թոռնիկ չունեմ:

– Հոգոց է քաշում...

– Չէ, Երջոն երջանիկ չէ այդ առումով: Ծրագիրս հետևյալն է. մինչև կյանքիս վերջը Գորիսից որևէ տեղ տեղափոխվող չեմ, թե Աստված էլ իջնի: Այս մարտ ամսին տարիքային կենսաթոշակի եմ անցնելու: Ինչպես ասել եմ, գերեզմանահատի աշխատանքը կատարելու եմ այնքան ժամանակ, ինչքան ուժս կների, առավելագույն չափով կծառայեմ իմ քաղաքին: Աստծո կամեցողությամբ, երբ տարիքս հասնի 75-ի, այսինքն 12 տարի հետո, տղայիս ու թոռնիկիս գերեզմանում երկու շիրմաքար եմ դնելու՝ մեկը ինձ, մյուսը՝ կնոջս համար: Չեմ ուզում այդ հոգսը թողնել աղջկաս կամ փեսայիս վրա: Նպատակս է՝ բոլոր առումներով նամուսով հեռանալ այս աշխարհից:

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
8.02.2023 Թ., Ք. ԳՈՐԻՍ

ԿՈՐԵԼ Է Ռազմիկ Հրաչիկի Բարխուդարյանի միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրված «Մարտական գործողությունների մասնակցի» վկայականը՝ Մ 03859, տրված 17.03.2018 թ.: Համարել անվավեր:

Սյունյաց Երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Ⓡ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 3 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 20.11.2025թ.: